



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-4

U-54

2230

425

18-43

252

1004
16303

491.542-4 | 2342204046

u-54

56007776

4485623

2010

1898

W 57

W 2002

491. 99-4

1898

Ա-53

սե

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԱՐՏԵԱՑ

ՏՆ. Հ. ԱՐՄԵՆԻ Վ. ԲԱՅՐԱՏՈՒՆԻՈՅ

Յ Ա Ղ Ա Գ Ս Հ Ն Չ Մ Ա Ն

425
18-Ա3

Դ. ԵՒ Լ

Տ Ա Ռ Ի Ց

Ի Հ. ԳԱԲՐԻԷԼԷ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Ի ՄԻԻԲԱՐԵԱՆ ՈՒԻՏԷՆ

1004
10991



Վ. ԵՆԵՏԻՎ

ի տպարանի սրբոյն դապարտ

1852



18-18
229

30240-U. h.

12848-58



ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ օրինաց և ազգի ազգի ազատու-
 թեանց հայկականիս մերոյ ձօն և պերճ բարբառոյ ոչ ուրեք
 և ոչ երբէք հանդիպեալ թուի ցարդ այնքանոյ բազմահմուտ
 հանձարոյ և ձեռին այնպէս ճարտարի, որպէս ցուցաւ ի նո-
 րումս մեծի Վերականի Տեան Հ. Արսենի վարդապետի
 Բաղրատունոյ պատահեալ: Օ այս աներկբայ ճշմարտու-
 թիւն առ տեղեաւս մեծաւ ուրախութեամբ, թէպէտ և
 յոյժ հարեանցի յիշատակաւ յայտ արարեալ, այլում թու-
 ղումք պատեհի ընդարձակագոյն բանիւ առնել տեսութիւն
 զանազանեալ ձօնութեանց այսր գանձարանի Արամեան լե-
 զուիս. իսկ աստանօր ի դէպ և յօգուտ մերումս հայրենի
 դպրութեան համարիմք պարզել հրապարակաւ և զմեր
 անձնական կարծիս և թուիս զինդրոյն յուզելոյ ի նմանէ
 ի սկզբան Վերականին, զոր ոչ սակաւ քաջութեամբ հա-
 ւաստէ ի կատարածին և ուրոյն ճառիւ. այն է խնդիրն
 զհարազատ հնչմանէ զ' և շ' տառից մերոց: Վանդի և նմին
 ինքեան մեծարգոյ հօր և հանձարեղ քերթողին ախորժաւ
 կան գիտեմք զվաստակս և զքննաբանութիւն զայսպիսեաց՝
 եթէ զմերն և եթէ զոյր ուրուք և իցէ՝ փոքր ի շատէ յայ-
 սոսիկ թարթափելոց: Ասէ իսկ ինքն հուպ ի վախճան
 ճառին. «Մեր զհին աւանդ ինչ ճշմարտութեան՝ զնիր-
 » հեալն ի խորս նախնեացն մատենից զարթուցաք և ի լոյս

„ Հանար առաջի բանիբուն գիտնոց միայն , և կարծե՞՞ ըստ
 „ կարի անլուծանելի հաւանութեամբ հաւաստեցար :
 „ Օ աւելին քան զայն ժամանակին թողումք , իւրով հա-
 „ ւանողական զօրութեամբ և ամենահնար արուեստիւ և
 „ ճարտարութեամբ կատարել զթերին : Իսկ մեր առանձին
 „ հասանաւիհան Տրայ և սովորութիւն՝ հարկ ինչ առնել և
 „ օրէնս լինել այլոց ոչ ունին „ :

Օ որ օրինակ զնութական նշխարս վաղնջական քա-
 ղաքաց և շինուածոց նախնի ժողովրդոց հետաքննեն հնա-
 խոյզք՝ ոչ միայն զգրաւոր աւանդութիւնսն որ զայնցանէ
 գտանիցին ի ձեռս ունելով , այլ և անգիր աւանդից ժողովրդ-
 դոցն մեծապէս պատկառ կալով , նոյնպէս և որ զբարբա-
 ոյց ազգի ուրուք կամ թէ զհնչմանէ այսր և այնր տառի
 լեզուին կամիցի առնել ինչ հետազօտութիւն , հարկ է զի
 մեծաւ մտադրութեամբ և զգուշութեամբ երկոքումքն եւս
 աւանդութեամբք վարեսցի , որչափ և փոփոխեալ իցեն նո-
 քին յանցս ժամանակաց : Յայտ իսկ է լեզուագիտաց զի
 այսմ զգուշութեան ոչ ինչ փոյթ կալեալ բանասիրաց ունանց
 յունաց և լատինացոց ի Ք. դարուն , վէճն ահագինս
 յուզեցին զբնիկ հնչմանէ տառից ինչ արժաբեւտացն հելլե-
 նացոց . իբր զի քաջուշիմն Արասմոս հոլանդացի և որք ի
 նորին սակի անոյցք՝ զգրոց վկայութիւնս և զփաստս իմաս-
 տասիրութեան եւեթ ի ձեռն առեալ պնդէին , օրինակ իմն ,
 թէ զհելլենականն յ է ընթեռնուլ արժան է և ոչ ի , որպէս
 այլքն հնչէին հանդերձ ողջոյն իսկ ազգան : Յունաց : Ըստ
 նմին օրինակի և ոչ սակաւք յԱրոպացոց անտի որք յու-
 սումն հայերէն խօսից մտաբերեցին՝ ի նոյնպիսի ինչ պաշա-
 րեալ յաղմուկ շփոթի ի տես տառադարձութեան լեզուիս
 կանոնաց ի գիրս , և ի լուր կենդանական հնչման ի բերանս
 ազգակցաց մերոց , համարեցան և դեռ եւս համարին՝ թէ
 ազգս հայոց առ հասարակ կորուսեալ իցէ զբնիկ և զուղիղ
 հնչումն յորովագունիցն ի տառից իւրոց , և մանաւանդ զսո-
 ցայս Բ , Գ , Դ , Ծ , Է , Զ , Ծ , Կ , Զ , Կ . և պնդեն թէ հարկ
 ի վերայ կայ զբեհն պէն հնչել , և զպէն Բէ , զգիմն կի՞՞ ,
 և զկենն Գէն , և զզայն Կա , և զտիւնն Դիւն , զԺայն Զա ,
 և զձայն Ծա , զՂէն Զէ , և զՋէն Ծէ , և զԵին ի սկիզբն և
 ի վերջս իսկ բառից է : Ս անս որոյ զգրեալսն և զհնչեալս ի
 հայոց Գրիգորիոս , Կերակոս , Տրտապ , Աստուած , Յեռն , յայտ

նախնիքն, Յակոբ և այլն, արժան է ասեն հնչել կրեկորիսս, քիբրաբոս, դրբար, ասորոսայ, ծիւղոն, խարնոն-նիւն, խափոպ * :

Օ այսր անհիմն կարծեաց զլուծումն տուեալ իսկ է մեր վաղ ուրեմն ի Ռազմավիպին. բայց և աստանօր յուշ առնեմք բանասիրաց իբրու անբասիր զայնպիսինս առնելով, զի որ այս պէս յանգէտս վեր ի վայր շրջեն ի գրուածս իւրեանց զհնչումն ազգի միոյ ողջոյն՝ ինքեանք օտարազգիք են, որոց դժուարին և բազում անգամ անհնարին իսկ է հաւաստեալ ի վերայ կալ բնիկ հնչմանց այլոյ ուրուք ազգի՝ ընդ որում չիցեն ժամանակս բազումս կենցաղեալ :

Գարձեալ և յաղաւաղ հնչմանէ սգիտաց ոմանց սահելոց յԱրոպա նշքհնչութեամբ և կամ շահավաճառութեան աղազաւ ի կողմանցն Սրաց և Սիւնեաց և յայլոց ծայրից հայաստան աշխարհի՝ պատճառս առին արդեօք այլազգիքն այնոքիկ իմաստունք հաւաստելոյ զկանխակալ կարծիս իւրեանց, անծանօթք ելով զեղեցիկ հնչման բնակչաց միջն աշխարհին մերոյ, զաւառացն ասեմ և նահանգաց Տարօնոյ և Ռզնունեաց և բարձր Հայոց և Մարաշտու. զի մեք ի սոսա միայն խնդրելի կարծեմք զանստերիւրն և զանսայթաք առողանուծիւն լեզուիս, և ոչ ի հատուածեալսն ի Սիրս և ի Հնդիկս, ի Սաթարս և ի Սաւառս, ի Յոյնս և յԵգիպտոս : Կարեւոր հարկ համարեցաք կանխաբանել աստէն զիրացդ, ազգ իմն այժմէն առնելով՝ եթէ այս իսկ է հիմն մերոցս կարծեաց. զի առ ի հաւաստեալ ի վերայ կալ բնիկ հնչման տառից մերոյս բարբառոյ, որով և ուղիղ առօգանուծեան լեզուիս առ հասարակ, ուշի ուշով պարտ է միտ դնել ոչ միայն անձայն և անխօս վարդապետութեան նախնեացն գրոյ, այլ և սեպհական հնչման ընտրելազուհիցն ի կենդանի բարբառս ազգիս, և ապա թէ վճիռ հատանել զստոյդ յատկուծեանց և զձայնից այսր և այնր տառի :

Մնչափ հաւաստի է այս վարդապետութիւն հանրական, զի և մեծարգոյ յօրինիչ նորոյ Վերականին ոչ միայն չմերժէ զսա, այլ և ուրեք ուրեք յիւրոցն կարծեաց հաս-

* Յայս կարծիս եղեն առաւելապէս ի հնումն Շրոտէր հոլանդացի, և Վիսթոնեան եղբարք անգղիացիք, և ի նորումս Փեթրման իրուսիացի և Պրոսէ գաղղիացի, արք յայլումս ամենայնի քաջահմուտք, և լեզուագէտք անուանիք, և յաչս մեր պատուականք բարեկամութեամբ և սղիւտամտութեամբ :

տատուութիւն սովորմբ վարի , որպէս տեսցի յառաջիկայսն :
 Սակայն քաջ գիտելով նորա թէ յառաջարկեալն ինդիր
 ուղիղ առողանութեան ղ և չ տառից ոչ է սա բաւական ի
 զօրավիգն իւրոցն կարծեաց , անդէն իսկ ի սկզբան բանիցն
 ի մէջ առնու զմիւս առածն սոյնպէս հանրական և ճշմարիտ
 թէ “ Յանցանել բազմադարեան ժամանակաց առ սակաւ
 ,, սակաւ մարթի յանզգաստից մտանել փոփոխութեան և
 ,, օտարոտի աղաւաղութեան , որպէս և եղեալ իսկ է ա-
 ,, մենեցուն վկայութեամբ , ի լեզուս ի լեզուս յայլ և այլ
 ,, պատճառաց ,” և ի վերայ բերէ . “ Այս անցք թուի
 ,, անցեալ և ընդ տառա մեր լ և զ . թուի ասեմբ առ այժմ ,
 ,, մինչեւ քննութեամբ ցուցցուք զիրացն հաւաստիս . զի
 ,, չեն կարծիք և թուիք միայն , այլ արդեամբք սարգեալ
 ,, խանգարումն ,” :

Թէ զինչ իցէ խանգարումնդ սարգեալ ի հնչման չ և ղ
 տառից՝ ըստ կարծեաց քերթողին մերոյ , ասացուք աստէն և
 աստ , և ապա զհաւաստիսն առցուք ի քնին : Ասէ նա թէ
 “ Դ կրկին էր առ մեզ ի հնումն . մին զատ և միւսն զիւրս .
 և այս զիւրս էր լիւն Բարաի կամ լերկ , : Այլ բարակ կամ լերկ
 լիւն ասելով զղիւնն խմանայ էէս լիւնի , զոր օրինակ է հըն-
 չումն լ ձայնիս նման լեւմ տառի Արաբացոց ի բառքս ալա ,
 հալա , փալա * , և այլն : Այլ թէ յինչ հաստատիցէ նա զկար-
 ծիս իւր կամ զվարդապետութիւն՝ արժան է մտադրու-
 թեամբ վերծանել , զի և հաւաստեացն զօրութիւն յայտ-
 նագոյնս յետ այնորիկ ծանիցի :

Վանգի ասէ քերթողն մեր ՚ի սկզբան բանից իւրոց այս-
 պէս . “ Յերեսուն և աւելի ամաց հետէ նկատեալ զի ոչ
 ,, սակաւ բառք լեզուիս և անուանք եբրայականք , հէլլենք
 ,, և լատինք զատիւ գրեալք ի հին գրչազիրս , իսկ ի բե-
 ,, ըան ազգին բառքս մեր առ հասարակ և յօտար անուանց
 ,, յորվապոյնք լիւնիւ ասին , ծագեցան տարակուսանք ի
 ,, միտա՝ զատիցն այնոցիկ լիւն լինելոյ : Յոր առաւել հա-
 ,, ւանեցուցանէին զմեզ այլազգացի անուանցն գրութիւն և
 ,, հնչումն , առ որս չիք բնաւ զատ տառ , և զպարզ լիւնն
 ,, նոցա , զտառն ասեմ լեզուածայր , որ մանաւանդ լերկ և

* Յայտնի են խոլիք սոցա և նմանաձայն բառից տաճկաց յորս ամբողջ
 կամ թանձր հնչիցէ լիւնն . զի ալա բարձրագոյն է , և ալա պիտակ . հալա
 այժմ , և հալա հօրաբոյր . փալա պարիսպ , և փալա մնացէ , և այլն :

„ փափուկ իսկ է առ նոսա քան առ մեզ՝ որպէս տեսցուք
 „ յառաջիկայդ, զայն ի կոկորդախօս զատ փոխել՝ յոյժ
 „ անտեղի թուէր յաչս մեր և օտար յամենայն լեզուաց
 „ օրինաց և մերոյ իսկ նախնեացն տառաձայնութեանն „ :

Ոչ է հարկ ասել՝ թէ ըստ մերոց կարծեաց չիք դատ
 ի լեզուիս մերում որ լինի իցէ հնչելի . այլ զզատն դատ
 հնչել արժան է՝ առաւել կամ նուազ փափուկութեամբ ,
 որպէս և զլիւնն լինի : Այլ եթէ իցէ ինչ լեալ ի հրնչ
 ման տառիցդ փոփոխումն , համարիմք թէ ի թանձրու
 թեան և ի փափուկութեան եւեթ հնչմանցն իցէ այն՝ և
 ոչ ի սպառսպուռ խանդարումն : Այլ առ այս կարեւոր է
 ի քնին առնուլ մի առ մի զբանս քերթողին հաւաստեօքն
 հանդերձ :

Ըսէ նախ՝ թէ “ Ոչ սակաւ բառք լեզուիս և անուանք
 „ երայսկանք , հեւլենք և լատինք զատիւ զրեալք ի հին
 „ գրչագիրս , իսկ ի բերան ազգին Բարսիս մեր առ հասարակ
 „ և յօտար անուանց յուղագոյն լինիւ ասին „ : — Յեղանալ
 կէ ասացուածոյս այնպէս իմն թուի լսողաց՝ թէ համօրէն
 ամենայն բառք լեզուիս՝ զատիւ (իմն զ՝ տառիւ կամ թէ
 զլինիւ) զրեալք ի գրչագիրս՝ ի բերան ազգին լինիւ
 հնչիցեն : Արդ մեք համարձակիմք ասել թէ չէ այն այն
 պէս . այսինքն է զի լինիւ ասին ի բերան ազգիս ոչ Բարսիս
 մեր առ հասարակ զլինիւ զրեալք ի գրչագիրս , և ոչ յուղա-
 գոյնս յօտար անուանց՝ նոյնպէս զլինիւ կամ զատիւ զրեալք ,
 այլ սակաւս յոյժ առ համեմատութեամբ անբաւիցն որ զա-
 տիւ գրին և զատ հնչեն : Այլ սակաւուցն եւս այնոցիկ
 լինիւ հնչել ոչ անպատճառ ինչ է , այլ իրաւացի խո-
 տորումն . և պատճառքն հաւանականք՝ յայտնի են զի-
 տողաց , և քերթողին եւս մերում գէթ ըստ մասին ծա-
 նուցեալք :

Վանզի նախ այնք ի բառից լեզուիս զատիւ զրեալք ի
 հնագոյն գրչագիրս՝ լինն հնչին և գրին եւս ի յուրիս ի
 գրչագրաց , յորս իցէ ոչ կամ աչ լմանկ և կամ յանգ . գոր
 օրինակ Խոյլ՝ , ծոյլ՝ , Գոյլ՝ , նոյլ՝ , այլ . և այսմ պատճառք՝
 հանդիպումն , տառի , որ լմէ և կակղէ զխտուութիւն զա-
 տին , և զրեա թէ ի փափուկութիւն լինին հասուցանէ ,
 մինչեւ գրել բազմաց և հնչել Խոյլ , ծոյլ , Գոյլ , նոյլ , այլ : Այլ
 հաւաստիք իրացս , զի ընդ պակասել , տառին ի բազմաց ի
 բառիցդ՝ զաան առնու դարձեալ զիւր ձեւ և զձայն , և պահէ

զայն անփութութիւնի , որպէս Թող և Թողոմիւն , նշող և նշողէմ , աղաճող և աղաճաղ :

Արհրորդ , յորժամ զատն ի սկիզբն բառից կայցէ , զոր օրինակ ղառակ , ղէղակ , ղառաժ , ղաճակ : Այսմ պատճառք աներկբայելիք այն՝ զի ի մերում լեզուիս որպէս տառքս ա և ք , նոյնպէս և նմանեալն նոցին ըստ հնչման ղ , ոչ է բառի սկսուած , այսինքն զի չկայ ի գլուխս ընդի բառից լեզուիս բայց եթէ զեղչմամբ նախընթաց ձայնաւոր տառի . զոր օրի նակ ղառակ և ղառիժ բառիցդ յայտնի որող է արմատ , որպէս և ղէկին աղէակն , և ղերչին աղէրչն :

Իսկ զայլազգացի անուանցն առ օտարս լինիւ սկսելոց և ի մեզ զինիւ գրեւոց դուն ուրեք (որպէս զունայ , զամբար , զեկան , զեգէոն , զատին) չեն ինչ զարմանք եթէ լինիւ եւս գրիցին և հնչիցեն առ մեզ , և յառաջիկայսն տեսցին և այնր պատճառք : Առ ժամս այնմ եւեթ միտ դնել աղաչին ընթերցողք զի և ի փոխաբերութեան անդ զատին ի լինս յայլազգի անուանս նշմարի ընդհանրապէս նոյն խտիր որ ինչ և ի մեր բառս ազգայինս . զի ահա յաճախ սովորութեամբ այնք յանուանց զատիւ և լինիւ գրին անխտիր , յորս զատն կամ ի յանգան իցէ ընդ է և ի ձայնակցաց եղեալ , և կամ ի մի ջին ընդ միում ի ձայնակցաց լծորդեալ . զոր օրինակ Աբէղ , Խարայեղ , Էղէ Էղէ , աղէղառիա , Փիղիպոս , Գիղիսոփայ , Գաղէղիա , Բաբէղոն կամ Բաբիղոն , Կեղիղէն , և այլն .

Արդարեւ ոչ ամենայն բառ զատիւ և լինիւ անխտիր գրեալք՝ ընդ սովին կանոնօքս փակին . բայց և որ կանոնք տառադարձութեան ՚ի մերում լեզուիս , որպէս և յայլն , չունիցին և խոտորմունս ազգի ազգիս : — Այս ուրեմն ոչ լինիւ հնչին Բառա մեր առ հասարակ զինիւ գրեալք , և ոչ զարձեալ յընթացոյնս յօրար անուանց նոյնպէս գրեալք . այլ սակաւք եւեթ , և սակաւքն այնորիկ ոչ վայրապար և առանց ինչ պատճառաց :

Այ անհաւան թուեցեալ համարիմք և քերթողին զայս զմեր կարծիս . զի ասէ ուրեք ի վերջ կոյս ճառին . « Սարթ , ևր թերեւս ումեք ի կարծիս անկանել վասն խառն գրու թեան միջին դարուց , թէ գուցէ ընդ նուրբ և սուր ձայնաւորս եղեալ իցեն զլին , նկատեալ զի ընդ նոսս գրե թէ ինքնին նուրբ հնչի տառդ (լինն ըստ քերթողին , բայց ըստ մեզ զատն) , և չիք վտանգ թաւանալոյ : Իսկ ընդ լայն և քաջահնչող ձայնաւորս , որովհետեւ յոյժ

22 զգալի լինի թանձրութիւն լինին (տարապարտ երկիւղ)
 23 պահեալ իցեն զբուն նշանազիրն հնոց զիւն, ազդ առնել
 24 թէ բարակ լին կարողալի է . . . Բայց և ոչ այսմ կար-
 25 ծեայ գտանեմք ինչ հաստատութիւն ի գրութիւնս նոցա,
 26 որպէս և ի վերոյգրեալ օրինակս մեր տեսանի . . . — Տե-
 27 սանեն անշուշտ մտադիր ընթերցողք և զմեր օրինակս զոր
 28 եղաք և զպատճառսն որովք զհարծիս մեր հաւատեցաք, և
 29 յառաջիկայսն յայտնագոյնս ցուցցուք. թող ինքեանք տեսցեն
 30 թէ իցէ՞ մարթ ումեք յանձն առնուլ զոր ինչ ի վերայ բե-
 31 րէ քերթողն, թէ “ վասն որոյ՝ այսր ամենայնի հետևու-
 32 թիւն այս եւեթ մնայ չհամողելոցն ցայս վայր. կամ զամե-
 33 նեսեան զատ հնչել կամ զամենեսեան լին, մի յերկուց
 34 այտի ընտրելի է ուղղախոհաց . չիք մէջ՝ բանաւոր պատ-
 35 ճառօք և ցուցիւք հաստատեալ մինչև ցորս ցայս, մինչև
 36 ի մեռելոց յարիցեն Սահակ, Մեսրոպ և Ազնիկ .” :

Մեր ոչ զմին և ոչ զմիւսն յերկուց այտի հաւանիմք
 ընտրել, այլ ըստ նախնեացն գրելոյ և առ հասարակ ամենայն
 ազգիս հնչելոյ գրեմք և հնչեմք Երոստաղե՛մ և Գալիլիա՛ս, Աե-
 անոր և Աեան, Մեդոդ և Մելքոն, Աղեքսանդր և Ալեքսիա-
 նոս, Կաղանդ և Ալի, Ռդոմ և Ռլան, Նոյնպէս և զայլն, և
 եթէ հարկ իցէ մէջ ինչ գտանել, զնուրբ զատն՝ որ և զիւն
 ի մէջ քերեմք : Եւ յազագս այսր ամենայնի զիւրին և
 քաջայայտ խնդրոց եւեթ չհամարիմք թէ արժան իցէ սպա-
 սել յառնելոյ ի մեռելոց Սահակայ և Մեսրոպայ և Ազնի-
 կան :

Օ ի ահա ինքն իսկ քերթողն ասէ բազում ուրեք ի
 ճառին զհակառակն, որպէս հուպ ընդ հուպ . “ Օ պարզ
 22 լին օտարաց, զտառն ասեմ լեզուածայր, որ մանաւանդ
 23 լերի եւ քաղաքի իսկ է առ նոսա քան առ մեզ, զայն ի հոհոր-
 24 դախոս զատ փոխել՝ յոյժ անտեղի թուեր յաչս մեր և
 25 օտար յամենայն լեզուաց օրինաց և մերոյ իսկ նախնեացն
 26 տառադարձութեան .” : Տեսանեն մտադիր ընթերցողք զի
 27 քերթողն մեր լերի եւ քաղաքի զօտարացն լին անուանելով
 (որպէս թէ միշտ և յամենեցուն բերանոյ այնպէս հնչիցի
 այն, ընդ որ չհաւանիմք մեք, որպէս ցուցցուք և յզնխան),
 հնարի առաւելագոյն իմն ոյժ տալ տարախուսանացն իւրոց,
 և իրաւունս ինչ առնուլ զմերն զատ միշտ հոհորդախոս կոչելոյ
 և աստ և բազում այլ ուրեք ի ճառին, իբրու տաղտուկ և
 դժպհի արդեօք կամելով ցուցանել զայն :

Այսմ կարճ ի կարճոյ կամեցեալ տալ պատասխանի , շատ համարիմ զնորին քերթողի զբան ի նմին իսկ ի ճառէն իւրմէ առեալ բերել ի մէջ , զի տեսցի թէ և ոչ ինքն անգամ հոչորդախօս ճանաչէ միշտ զղատն . որով համարձակեցուցանէ զմեզ ի վերայ ածել թէ ոչ ուրեմն անպէղի է և օտար յամենայն լեզուաց օրինաց եւ մերոյ իսկ նախնեացն փառաբարձութեան՝ լիւնին օտարաց ի մեզ զատ փոփոխումն : Վանզի ասէ . « Իցէ թերեւս միւս եւս պատճառ դիւ բացատրելոյ » նախնեաց զյոյժ լերկ և նայ լիւն օտարաց , այսինքն աւելուանալըր դատիւ . այն զի բարակ զկամ ՚յ Յունաց զրեթէ նոյնանայ ընդ ամենայերկ լիւն , կամ որպէս գաղղիացիք այսօր անուանեն և հնչեն L mouilleé որ երկոքին տառք նոյնաձայն են այժմ ի բերանս Յունաց և Վաղղիացոց : () րինակ իմն ի բառն φαιή և failli . յորոց թէպէտ յունականն զրեալ ամենանուրբ զատիւ և գաղղիականն ամենայերկ լիւնիւ , երկոքին զան նոյնանան ի մի ձայն ֆայի ի բերանս երկոցունց ազգացդ : Թերեւս ասեմք այսպիսի ինչ նոյնութիւն կամ նմանութիւն տեսեալ նախնեաց ընդ ավելուանալըր դատ և ընդ ամենայերկ լամիլտա Յունաց , առաւել ընտրեցին դիւնիւ բացատրել զայն քան լիւնիւ . երկուցեալք թերեւս և ի սովորական յախընթոր թանձրութենէ լիւնին մերոյ * » : — Ապաքէն դժուարին յոյժ է միաբանել զբանքս ընդ առաջնոյն՝ յորում արձակաբար ասելք թէ մերքն զլերկ լիւն օտարաց ի հոչորդախօս զատ փոխեցին . այլ և ոչ ընդ պատասխանուոյն զոր տայ առ Բանի Բոանի իւրմէ անուանեալ Արիստակէս գրիչ , յասել նորին թէ « զատդ լծորդ է լիւնիդ » , զի ինքն յաւելու թէ խառնախոսութեան մանասանոր ասելի է զայդ բան լծորդութեան : — Եւ ոչ ընդ այնմ զոր այլուր ասէ . « Սակայն որչափ և նրբեացի ձայն զատին , անհնար թուի մտաց և բերանոյ գալ հաւասարել նմա ընդ ձայնի լիւնին » : — Եւ ոչ ընդ այնմ թէ « Ասացաք վերագոյնդ և դարձեալ ասեմք . կրկին զարի հնչումն ցնորք միայն են ի մեզ , ոչ ուրեք երևեալ ի վարդապետութիւնս նախնեաց և ոչ ի բերան ուրուք » :

Ասացեալ էր մեր երբեմն ուրեմն թէ քանզի նախնիք հաստատեն եթէ « դիւն ոչ զատ է և ոչ լիւն » , մարթիմք ասել թէ ապա ուրեմն միջին իմն է ընդ երկուսն , եւ քարակ

դատ, և ոչ նոր ինչ և երբորդ հնչուցն կես լիանի : Արդ հարցանէ քերթողն . որով իրաւամբք նոր և երբորդ հնչուցն ասիցես զվերի լիանն , և ոչ զքարակ դատն քո : Այլ դարձեալ յետ սակաւ միոյ . « Չիարդ զբարակ դատն նորդայնն ճարն է փոխել » ի լիան . կամ զիարդ լիւն թաւ մարթ է նոյնանալ ընդ » դատ կոկորդաձայն : Այլ որ ի լեզու ունողաց և խօսողաց » մարթ է իմանալ զայդ կամ ձեացուցանել ի գործարանին » յաւիտեան » :

Յաճախեցաք զվկայութիւնսդ ի նորին իսկ բանից քերթողին կամելով զօրացուցանել զմեր կարծիս և յուսամ թէ յաջողեսցուք . զի աւանիկ և ի բանի անդ զոր ի վեր այսր նախ առաջին կոչեցաք ի վկայութիւն , յորժամ ողորէ և ամօքէ , լմէ և կակղէ զդատն և ամենանորէ զնա անուանեալ ընդ ամենաւերի իսկ անուանեալ լիւնին իւրոյ թրմէ և զանգէ , և զտառագարձութիւն նախնեաց արդարացուցանել ճգնի , թէպէտեւ դառնայցէ ի վերջէ և յուրաստ գայցէ յամենա նորէ դատէն ասելով . « Սակայն և այդ ձայն ոչ միայն դատ » չէ կոկորդային , այլ և ամենալերի լիւն , և ի տեղի սորա եղեալ » . ոչ այլ ինչ յայտ առնէ , բայց զի հարկ ի վերայ կայ խոստովանել ընդ մեզ եթէ դատն մեր դուն ուրեք նորդայնն է , այսինքն ի բառս յորս զկնի զափն իցէ և այլ տառ բաղաձայն խաժ և թանձր , որպէս ի բառքս եղբայր , յաղթ , ճաղթանք , ջաղթել , և այլն . և այն եւս ոչ երբէք հանգոյն դայնին Արբացուց . իսկ ի յորովագոյնս ի բառից , եւս առաւել ի մակակիտեալն փշկաւ , ամենանուրբ հնչէ ի բերանս մեծի և փոքու հանգոյն սարսկական և օսմանեան զափն ի բառս պաղ , պաղչէ , օղաւ , աղաձ , աղբղ , և այլն . որպէս յայտ է որոց կամիցինն անաչառապէս միտ զնել :

Սովին լուծմամբ անպէղաւնեանն մեծի զոր տեսանէ քերթողն ի փոխել անդ լիւնին օտարաց ի դատ մեր ամենանորէ , թուի մեզ թէ ակն յայտնի իցէ մանաւանդ անտեղութիւնն զարմանալոյ և ասելոյ թէ այս փոփոխումն օտար իցէ յամենայն լեզուաց օրինաց և մերոյ իսկ նախնեացն աստարարչութեան : Սակայն մեք վերստին առցուք ի մէջ զայս ինդիր յառաջիկայսդ : Սկ ի ժամուս փութացուք ի քնին հաւաստեացն զորս նորա գտեալ է ի բանս հին քերականին և մեկնաց նորա ի հաստատութիւն կարծեաց իւրոց , մանաւանդ թէ որպէս ինքն իսկ ասէ՝ աներկբայ ստուգութեան , եթէ դ

հրէին էր առ մեզ ի հնումն, մին զար և մասն շինան, և ըն այս
 շինան էր շինան Բարազէ համ լերի :

“ Ի հին Վերականին գտանեմք, ասէ, նախ՝ զի և մեր
 ,, ընդ թաւ և ստուար և յոյր տառն կարգի, զ ընդ միջակ
 ,, սրն : Երկրորդ, զի և որ յամենայն լեզուս ընդ նայս կամ
 ,, լերկս դասեալ է, չգտանի անդ ընդ նայսն, այլ փոխանակ
 ,, նորա և լին Յունաց կայ զ թուեալ ընդ միւս նայսն Մ,
 ,, Ն, Բ . . . Երրորդ, զի թաւ տառն և ընդ կրկնականն դա-
 ,, սեալ է անդ, և ասի իսկ յերկուց ձայնակցաց բաղկա-
 ,, ցեալ : Եւ յսչափ ինչ եւեթ ՚ի հին Վերականին գտեալ,
 ,, զարմնայ քերթողն մեր՝ մանաւանդ ընդ այն զի “ Կ ատ
 ,, ձայն խաժ և ինչորային, ասէ, զիսրդ մարթիցէ նայ լինել
 ,, կամ լերկ, որպէս դնի ընդ նայսն, ուր ՚ շեղենաց նրբա-
 ,, գոյն յոյժ քան զմերն զ ոչ երբէք թուի ի Յունաց ընդ
 ,, նայսն ” : Թէպէտ և վատահեմք ի ստուգութիւն բանից
 նախնի քերականացն զորս յառաջ ածէ քերթողն մեր, սա-
 կայն ի լուծումն զարմնաց նորա յուշ առնեմք նման զի հին
 քերականն այն ի յունէ ի մերս թարգմանեալ, ապաքէն ՚ի
 բազում ինչ իրս զՆեղեն լեզուի կանոնն հնարի և մերումն
 պատշաճեցուցանել . և զինչ զարմանք այնուհետեւ եթէ
 ինչ ինչ ի բանից նորին անխմանալիք իցեն ոչ միայն մեզ,
 այլ և մծտագունիցն քան զմեզ ժամանակաւ առ թարգմա-
 նիչ այնր քերականի, առ մեկնիչս ասեմ հին քերականին,
 որ և ոչ ամենեքին յունագէտք էին, և ոչ զՆեղեն բնագիրն
 առ ձեռն ունէին որպէս մերս :

Եւ յերաւի . զինչ իմանայցեմք մեք, օրինակ իմն, յորժամ
 ասիցէ նոյն քերական թէ “ Խ կրկնակ է յերկուց քէից ” .
 միթէ կրկնելով և երեքինելով գէ մարթիցեմք Խէ ձայն
 արտաբերել . և յորժամ ասիցէ թէ “ Ղ ի սէէ և ի դայէ
 կրկնակ է ”, զինչ իմանայցեմք առանց զՆեղեն տառն և
 զլծորդութիւնս նոցին ընդ միտ ածելոյ : Եւ պա ուրեմն չեն և
 չեն ինչ զարմանք, ասեմ, եթէ և զլիւնն ընդ կրկնականն դասի-
 ցէ՝ յերկուց զատից բաղկացեալ զայն ասելով, որպէս և զխէ
 յերկուց քէից ասաց :

Իսկ զի զ ընդ նայսն դասեալ է ի հին քերականէն, կար-
 ծեմք թէ չէ ինչ պարտ զարմանալ . զի ոչ աւանիկ յառաջ
 քան զթարգմանիչ Թրակացոյն սուրբն Սեբրովպ հան-
 դէպ լին Յունաց զլատն մեր կռեալ է յայբուբենն և ոչ
 զլիւն :

Այլ մեք ընդ այն զարմանամք զի քերթողն մեր բացէ ի ի բաց մերժէ զիրսդ, թերեւս զի քանդիչ զիտէ զայն հիմանց վարդապետութեան իւրոյ . ասէ . “ Արդարեւ պատշաճեւ ” պատշաճեցոյց Սերոպ նուրբ լինին այլոց, ոչ զղարկ և ոչ զլին մեր թանձր, այլ զլին կամ լին նուրբ, և այն է աւանդիկ ընդ նայսն դասեալն ի հին Վերականին ” :

Այս ասացուած քերթողին հարկ առնէ մեզ կարգել աստանօր մի ըստ միոյն զհայերէն աթուծայս և զսիւղօբայս կամ զալփաբետս Յունաց, զի ակներեւ տեսցի թէ զինչ իմանայր Խորենացին յորժամ ասէր . “ Առ ձեռն պատրաստ ” Սերոպայ փոխատրելով զհայերէն աթուծայսն ըստ անսայթաբութեան սիղօբայից հելլենացւոց ” . և զինչ յորժամ Փարպեցին՝ եւս պարզագոյն թէ “ Արանելին Սաշտոց ” հանրիպեցոցանէր զհայերէն աթուծայսն ըստ կարգմանս սարովբայիցն Յունաց ” :

Եւ այս է կարգումն այն և փոխատրութիւն .

α	ա	—	Ճ հայկ .
β	բ	μ	մ
γ	գ	—	յ հայկ .
δ	դ	ν	ն
ε	ե	ξ	չ
ς	զ	ο	օ
η	է	—	չ հայկ .
—	ը բնիկ հայկական .	π	պ
θ	թ	—	ջ հայկ .
—	ժ բնիկ հայկ .	ρ	ռ
ι	ի	ς	ս
—	լ	—	վ հայկ .
—	խ } հայկ .	τ	տ
—	ծ } հայկ .	—	թ } հայկ .
κ	կ	—	ց } հայկ .
—	հ } հայկ .	υ	ւ
—	ձ } հայկ .	φ	փ
λ	ղ	χ	ք

Ըրդ յայսմ անսայթաք կարգման մերոյն աթուծայից
 Հանդէպ յունականացն՝ զինչ իցէ պատշաճեցուցեալն լինին
 օտարաց . — ոչ ապաբէն դառ տառ , և ոչ դիւն և ոչ այլ ինչ .
 — վասն որոյ չիմանամք թէ զինչ իցէ զոր պնդէ քերթողն
 մեր թէ պատշաճեցոյց Սէրուպ նուրբ լինին այլոց ոչ զդառ ,
 այլ զլինն : Օ այդ մեք ոչ տեսանեմք . իսկ զոր տեսանեմքս
 այն է զի ճինեն զնա իբրդ . նմին իրի հարցանէ . « Եւ ո՛վ
 ասէ թէ զամենայն տառս մեր պատշաճեցոյց Սէրուպ
 հէլլենականացն . աղէ որո՞յ գրոյ հանդէպ եղեալ իցէ
 զտառքս Ը , Ժ , Ծ , Զ , Ճ , Զ , Զ , Յ , առ ի թարգման
 նել զյատուկ հէլլենականսն ի մերս . որ որ տեսեալ իցէ
 զգիր ձեռացն Սէրուպայ պատմեցէ մեզ , » :

Ը որ տամք պատասխանի՝ թէ յետ առաջի աչաց ունե-
 լոյ զպատկեր երկոցունց արիաբետացդ և զվկայութիւնս
 Կորեան և Փարպեցոցն և Կորենացոյ , անհաւանութիւն
 մեծ գրեցի և մեզ և նմա և ամենայն ումեք Կորօքէն Գրոյ
 յետին Սէրուպայ՝ զի տեսցուք և հաւատասցուք :

Տարբդ յորինակ ի մէջ բերեալք ի քերթողէն՝ առ հա-
 սարակ օտարք են ի հէլլեն բարբառոյ , և սակաւուց ոմանց
 յարևելեայ լեզուաց՝ ընդ որս և մերումն՝ սեպհականք . վասն
 որոյ և ի սրբոյն Սէրուպայ ցրուեալ իմն են ի շարս յունա-
 կան սիւղոբայից : Ընդ նոսին համարի թերեւս քերթողն
 մեր իստոն հալածել և ի բաց վտարել և զառն յերեսաց
 լին Յունաց . այլ նա անխախտ է ի տեղուջ իւրում , և
 զղիւնն նորամուտ բացէ ի բաց հերբէ . և ճներէ ումեք ի
 հայկազանց՝ թէպէտեւ հարիւրամեայք իցեն՝ ասել չա ,
 զլինն , ճէ , մէ :

Ը այց ինդիր մեծ և ծանր եւս քան զայս վասն քերթողին
 մերոյ այս իցէ , զի և յառաջ եւս քան զՍէրուպ՝ ըստ պա-
 հանջելոյ բնիկ լեզուիս յատկութեանց՝ յորովագոյնք ի բա-
 ուից օտարաց լինիւ գրելոց առ նոսա , ի մեզ զատու հնչէին ,
 ըստ որում և գրինն , և մերքն դարձեալ զատաձայնք՝ յօտա-
 րաց բերանս լինիւ արտաբերին . օրինակ իմն ,

- աղ , յն . ἄλς , լատ . sal , սլաւ . сол :
- աղաղակ , յն . ἀλαλαγμός .
- աղուէս , յն . ἀλώπηξ , լատ . vulpis .
- աղեկատ , յն . ἡλακάτη .

աղամ, յն . ἀλέω.

աղագ, արաբ . բլած, բլած :

աղտեղի, արս . ալտաէ :

աղաբողոն, յն . ἀναβολή.

աղիւս, վր . ալիւի, և սարս . ալիւի :

աստղ, լատ . stella, և յն . ἄστρον.

բաղանիք, յն . βαλανεϊον, լատ . balneum.

բիւրեղ, յն . βεριλλος, արս . դիւրուր :

գաղափար և կաղապար, սաճ . ֆալալ :

գաղջ, եղի, սաճ . բլիւ, բլիւ :

գեղ, յն . κάλλος.

եղ, իւղ, յն . ἔλεον, սաճ . էալ :

էկեղեցի, յն . ἐκκλησία.

զամբիւղ, արս . զեմիւլ :

խուղ, արս . խիւ, սաճ . ֆուլիւ, որ է յն . καλύβη.

խաղ, ծաղր, յն . γέλος.

խեղ, կաղ, յն . χωλός.

կաղամուր (որ է կալամուր ասէն Սաքիստրոս և Արդըն
կացին, յայտ է թէ լատինականութեան և ոչ էթէ
լատինական . ապա թէ ոչ հարկ լինէր և զճարի
րէն = հնչէ), յն . καλαμάριον.

կաղամբ, արս . շիւլ :

կաղին, յն . γάλανος, լատ . glans, և սաճ . ֆալի :

կանթեղ, արս . ֆալի, լատ . candela.

կանկեղն, յն . κίγκλης, լատ . cancelli.

կեղ, յն . ἔλκος և κήλη, և սաճ . խի :

կողոպուտ, յն . κλέπτον.

կողր, յն . κολόβιον.

կողով . վր . կուլի :

կուրապաղատ, լատ . և յն . χουροπαλάτης.

մագաղաթ, երբ . մալիւթ :

մանգաղ, վր . մալիւթ :

մեղի, մալաքոս, լատ . mollis.

մեղր, յն . μέλι, լատ . mel.

- մեղու , յն . μέλισσα.
 շաղ , պրս . ծալ :
 շող , տճ . շէօլէ :
 շողգամ , տճ . շալէամ , շէլշէմ :
 ողջ , յն . ὄλος.
 արողւլատ , արողպատ , պրս . քր-լատ :
 սաղմոս , յն . ψαλμός.
 տաղաւար , վր . քաւալարի :
 տապեղ , լատ . tabella, tabula.
 տաւիղ , եբբ . նէվէլ . տճ . քաւալար :
 փիղ , պրս . Քիլ . վր . սդիլօ :
 փող , պրս . և արաբ . Քուլ :

(Թ)ուի ինձ թէ շատ իսկ են օրինակքս ի ցուցանել , որպէս ասացաք , եթէ մերն ղ առ օտարս ղ էր ի սկզբանէ հետէ և է իսկ մինչեւ ցայսօր , և օտարացն ղ ի մեզ ղ , և սակաւ ուրեք եւեթ ղ , և այն ի սկիզբն եւեթ բառից : Օ որ և քաջ գիտելով սրբոյն (Եսրոպայ՝ առ ղ օտարաց զմերն ղ պատշաճեցոյց և ոչ զլին , կամ զղատաձեւն զին՝ ինչ լին հրն մամբ , որպէս քերթօղն մեր համարի : Բայց աղէ զինչ նա առ այսօսիկ ասիցէ օրինակս և արդինս . “ (Թ)ուի թէ ”

անուանք ինչ սաւառ յոյժ (ասէ՛) վաղուց յառաջ քան զգիւտ գրոյ մերոյ և գրականութեան թարգմանչաց՝ ի սովորութենէ ռամկին մտեալ էին յազգն թիւր լեւելով կամ թիւր արտաբերելով զօտարացն , որպէս գտանի եղեալ այդ յամենայն ազինս ” . և յաւելու օրինակս քանի մի այսպիսեաց փոխաբերութեանց ի մեզ և յայլ լեզուս : — Սակայն յաճախութիւն մերոցն օրինակաց ոչ արդեօք յայտ յանդիման ցուցանիցէ թէ ոչ սաւառ յոյժ են այսպիսի անուանք այլ քաւալար յոյժ , և ոչ ի Ռիւր սովորութենէ ռամկին մտեալ յազգն , այլ հաստատուն կանոնիւ տառադարձութեան աթութայից , և լծորդութեան զատին և լինի :

Օ արմանք այն են զի քերթօղն մեր յուրաստ կայ և յայսմանէ (թէպէտ և Մըրիստակէսն եւս բանիբուն գրիչ աղաղակիցէ թէ “ զատն լծորդ է լինին ” , որպէս և է իսկ ճշմարտութեամբ) , և վեր ի վայր ի ձառին խառնակութեան ասէ զայսպիսիս քան թէ լծորդութիւն . և ապա դատնայ

ուրեք և ինքնին օրինակ ի մէջ ածէ զբառքս լի և յղի, աղ
 և անալի, գեղ և գիւ, փայլափղիճ, Ռոյղ և Ռոյլ և Ռոզ և Ռոզոսմ.
 որոց և ի վերայ բերէ թէ “Մ. յսրբիկ անհասից ինդրիք են”
 ,, թագուցեալք ի մնայլ գաղտնութեան ծագման, կազմու-
 ,, թեան և փոփոխման լեզուաց, և չմարթեն լինել մեզ ի
 ,, կանոն տառադարձութեան ”: — (Թուի մեզ, եթէ նե-
 ղիցէ քերթողն քաջ ասել համարձակ և զմեր կարծիս,
 թուի մեզ թէ բանիւք այսպիսեօք խուսափել իմն ինդրիցէ
 նա ի հզօրագունէն ի փաստից մերոց. վասն որոյ և հարցա-
 նեմք վերստին. Այցցէ ի մերում լեզուիս զատ տառ և ձայն
 թէ ոչ. եթէ կայցէ, հանդէպ որոյ ի սիւղղբայից կամ յա-
 թուութայիցն հէլլենացւոց եղեալ իցէ ի Մեսրոպայ: —
 Ապաքէն հանդէպ լամլտային, որպէս տեսաւ. և ընդէր
 արդեօք:

Վարձեալ և ի տառադարձութեան յատուկ անուանց օ-
 տարաց որ յաճախագոյն է սովորութիւն առ նախնիս, ի
 զան փոխել զիւն օտարաց թէ ի լիւն. ոչ ապաքէն ի
 զատն:

Այս ուրեմն այս է և կանոնաւորն տառադարձութիւն.
 իսկ ի լիւն փոխել պարականոն է և խոտորումն, թէպէտ և
 ոչ անպատճառ, որպէս և հաւանեալքս եմք, և որպէս ցու-
 ցաք հարւանցի տեսութեամբ, վասն որոյ և ոչ խոտելի
 այնպէս որպէս քերթողն մեր խոտէ զգատ:

Քերթողն մեր թերեւս ոչ այնչափ յընդդիմադրութեանց
 աստի մերոց, որչափ յիրացն բացայայտութենէ ստիպեալ,
 հարցանէ անձամբ ցանձն իւր նախ թէ “Վախնիքն մեր,
 ,, որպէս երեւի առաջին և վեր ի վերոյ որեւորեալք, ընդէր
 ,, զլերկ լիւնն մեր և զայլազգի անուանցն՝ զատ նշանագրաւն
 ,, բացատրեցին, և ոչ մանաւանդ լիւն գրովն որ առաւել
 ,, ազգակից է լերկ լիւնին և յարմար դիտման իւրեանց,
 ,, թաւութեամբն եւեթ զանազանեալ, որում և զարման
 ,, լինէր փշիկն ”: — Արիտակէս գրիչ փութայ տալ նմա
 պատասխանի. “Ալ զի զատդ լծորդ է լիւնիդ, հերիք հա-
 ,, մարեցան սուրբ թարգմանիչքն զատի գլխով գծադրել և
 ,, ոչ մերով թանձր լիւնիւ, որպէս էղի էղի, և ոչ էլի էլի,
 ,, զի այս թանձր է և յախնութոր: Ալ և ի յորովութենէ
 ,, գրոյ խոյս կամեցան տալ. վասն այն սմին որիչ գիր չսահ-
 ,, մանեցին ”:

Սակայն քերթողն մեր չհաւանի ընդ պատ ի պատ լու-

1004) 19848-58
 76303

ժուճնն , և ինքն ասէ . “ Եղեալ լէ նախնիսն ճշմարտիւ զաս
 ,, գրեալ իցէն , մարթ է կարծել թէ ի բառս և յանուանս ինչ
 ,, ասակարարս ազգային եղեալ հնչման հետեւելով արաւ
 ,, ըեալ իցեն զայդ , որպէս ի սաղմոսն , յեկեղեցին ” : —
 Եւ ո՛վ որ զայս լուեալ չասիցէ ընդ մեզ վաղվադակի . Եթէ
 նախնիք պարտ և արժան համարեցան յայսմ առկաբար ապագայն
 եղեալ հնչման հետեւել , և զայլոց սալճոսն սաղմոս գրել և հնչել ,
 և զեկեղեցին եկեղեցի , մեք որով իրաւամբք անդիցիմք հաւ
 մոզկեր լինել ժամանակակցաց մերոց և յաջորդաց թէ հարկ
 իցէ ի բաց թողուլ զազգայինն զայն հնչումն , և կամ որպէս
 քերթողդ ասէ՝ զկանխադոյն իսկ քան զաւուրս թարգման
 չացն ուսմկաբար՝ ազգային եղեալ հնչումն : Ո՛չ շատ իցէ
 այն զի ի վեշտասան դարուց հետէ ապագայն հնչումն և սովո
 բուխիսն լեալ է՝ առ լինն այլոց զլատն մեր պատշաճեցուցա
 նել : Բայց թէ ուսմկաբար լեալ իցէ այն և ոչ բնաւորաբար
 կամ իմաստնապէս , կարծեմ թէ ոչ որ յանձն առնուցու
 իմաստնանալ ընդ ում և իցէ յայսմ կեղակարծ իմաստու
 թեան , քան թէ ընդ ազգին ողջոյն և ընդ բաղմահմուտ
 թարգմանչացն իւրոց ուսմկանալ :

Տեսեալ անշուշտ քերթողին թէ այս մեկնութիւն զա
 տին ի լինն և լինին ի զատ փոխելոյ՝ զմիտս լողացն հա
 ճել ոչ ունի , այլ իմն վարկած ի մէջ բերէ իբրու առաւել
 քան զայլն հաւանելի . ասէ . “ Բայց որպէս առաւել կա
 ,, ասնեալս էմ , յիրացն բնութեան և ի նախնեացն բանից
 ,, երեւի անշուշտ , թէ հին նախնիքն ոչ զատ գրեցին և
 ,, փշիկ եղին ի վերայ , այլ լինն գրեցին և փշիկն նշանակ
 ,, լերկութեան ի վայր կոյս մօտ ի գլուխ լինին եղեալ էր
 ,, անդ ի հնումն , որով նմանութիւն իմն բերէր զատի .
 ,, որոյ վասն իսկ զինն անուանեցին զնա յետինք , ի ձևոյն և
 ,, ի ձայնէն բաղադրեալ անուն : Եւս առննթեր կէտ , չգիւ
 ,, տեմ որպէս եղեալ , առ սակաւ սակաւ խառնեալ թուի
 ,, ընդ գլուխ լինին , և այնու լինն զատի նմանեալ . ուստի
 ,, և յետոց , մանաւանդ ի տգիտութեան դարս , չկարելով
 ,, քաջ որոշել , զատ կարծեալ են , և կատարեալ զատ
 ,, գրեալ , որպէս զայլ ազգային զատով գրեալ բառս մեր ,
 ,, այլ և յետ ժամանակաց տգիտաբար զատ հնչեալ , ” : —
 Երգարեւ գեղեցիկ էր գիւտս , եթէ ընդ գեղոյն և զճմար
 տութիւն ունէր . սակայն գիտէ և ամենայն որ զի նախնեացն
 գրութեան ձև երկալսագիր անուանեալն էր , յորում և զատն

ոչ ըստ բոլորագրոյն՝ կետի նման ունի զգլուխն, այլ կնձխաձեւ իմն մինչ ի գետին գողցես երկայնեալ, այսպէս Ղ. վասն որոյ և ի զուր, որպէս թուի մեզ, ջանասհար լինի քերթողն հաւաստել այնու զիւրն կարծիս. զի մեր չիք տեսեալ, որպէս և ոչ նորին ինքեան անշուշտ, և ոչ ի միում գրչագրի զհետս այսպիսոյ կերպարանափոխութեան լիւնին ի զատի ձեւ :

Այս իսկ արդարեւ առ ումեմն ի մեկնչաց հին քերականին նշան ինչ այսպիսոյ փոփոխութեան, որպէս ինքն բերէ ի մէջ և ասէ . « Այսմ մեկնութեան գրեթէ յայտնի վկայէ »
 « Երզնկացին ասելովն . « Քանզի հնարեալ զայս թարգմանչացն , զի որ յայլ ալֆ լիւնով է անոան՝ ի մերս զարով սահմանն »
 « Ենչին վասն քանի յարձրեալս յարձրիս (այսինքն լիւնին մերոյ) »
 « ասէ Ս . Հ . Արսէն » . զնելով կէտ առնութեք լիւնին այսպէս Ղ . եղեւ զատ . և դարձեալ զնոյն կէտ ի վերայ »
 « գլխոյն զնել , եղեւ զիւն . որպէս զի խօսեսցուք զմերս , խօսեսցուք և զնոցայն » : — Եթէ այս վկայութիւն բովանդակ ընդունելի իցէ քերթողին , որպէս մեզս է ամենեւին , նախ այնմ աղաչի միտ զնել , զի ասէ Երզնկացիդ . զի որ յայլ ալֆ լիւնով է անոան՝ ի մերս զարով սահմանեցին վասն քանի յարձրեալս : Անսինկ մեք և յայմ բանի զտառադարձութեան կանոն տեսանեմք ըստ մերումն կարծեաց հաստատեալ . և հարցանեմք թէ ինքն յինչ միտս կամ ընդէր յաւելուցու փակագծաւ , այսինքն լիւնին մերոյ . միթէ լիւնն մեր միայն թանձր իցէ քան զայլոց ազգացն , եթէ և լեզուս ողջոյն քան զոմանց ի նոցանէ , գէթ ըստ Երզնկացւոյն մտաց : (Թող զայն . Երզնկացիդ զձե զիւնն մեկնաբանէ յայդմ բանի թէ զղատին . — Դնելով , ասէ , իէր առնելեր լիւնին՝ այսպէս Ղ , եղեւ զատ . և յետ այնորիկ կամ մեցեալ և զգլխնէն տալ ինչ մեկնութիւն և ցուցանել թէ ոչ հեռի է այն ի զատէ և ի լիւնէ , յաւելու . և դարձեալ զնոյն իէր ի վերայ գլխոյն դնել եղեւ զիւն : Երզնկացին շատացեալ իւրովս մեկնութեամբ , ասէ . որպէս զի խօսեսցուք զմերս , յայտ է թէ զղատիւ գրեալսն զատ հնչելով , խօսեսցուք և զնոցայն , այսինքն զօտարաց բառս զիւնիւ գրեալս Բարակ զարհնչելով՝ որպէս ազգ առնէ կէտն նշանակ լերկութեան եղեալ ի վերայ :

Եւ այն զիւնի գրելն , ոչ ամենեքին՝ որպէս թուի կարծեցուցանել քերթողն մեր , և ոչ բազումք ինչ , այլ յոյժ սակաւք ոմանք եւեթ , Բարձին ի սպաս զարմատութեանն զայն զար

Գրոյն՝ Գրելով ի վերայ նշանակ լերին-լեւանն . — և այն ոչ եթէ որպէս նայն ասէ , ի զփոշոթիւն շխտանելոյ ընդ Գլխոյ լեւանն և զսա կարծելոյ , — այլ զի լծորդ և ազգակից է զատն լիւնին՝ որպէս տառադարձութեանն կանոն հիմնեալ ի վերայ իրացն ճշմարտութեան ցուցանէ , և որպէս Ղրիստակէս գրիչ վկայէ :

Իսկ զի յետ ի լիւն զլեւանն փոխելոյ՝ զփշիկն ՚ի վերայ լիւնին պահեցին ոմանք յերկիւղած կամ թէ յիմաստակ գրչաց՝ որպէս ոչ ինչ խղճեմք կասկածել , ոչ այլում իմիք համարելի է այն նշանակ , բայց եթէ այսմ՝ զի յօրինակս իւրեանց զատիւ կամ զատիւ գրեալ էր բառն , և ինքեանք ըստ ռամկական հնչման ի լիւն զայն փոխեցին :

Եւ ահա տեսաւ ըստ բաւականին , որպէս կարծեմ , թէ զիւրդ և ընդէր անհիմն թուեցաւ մեզ այս մեկնութիւն Բաղրատունոյ Տօրն՝ թէ ի բուն կարգմանն նշանագիր աստիք չէր զսա այլ լեւան՝ չէր առնելեր ոմանք լիւն լերին-լեւանն :

Տեսաւ և այն , ամենայն յայտնութեամբ , թէ զուր ջանք են ժխտել թէ նախնիքն մեր առ լիւն ձայն օտարաց չիցեն պատշաճեցուցեալ զլատ : Բանզի զնոյն հաստատեն և կարգ այբուբենիցն մերոց , և հին քերականին բանք , և տառադարձութեանն կանոն նախնեայ՝ ստուգեալ անժրիտելի հաւաստեօք :

Իսկ յետ այսորիկ ոչ ինչ դժուարին համարիմք ընթերցողաց ի միտ առնուլ եթէ որչափ ինչ զօրիցեն յայս խնդիր պատ ի պատ մեկնութիւնք Երզնկացոյն և Ալեցոյ և Ղրիստակեայ , և անկանոն և խառն ի խռոն գրութիւնք լաւ և հմտաւ անուանեալ գրչաց : Սակայն զի մի արդեօք զարհամարհանս իբրեւ զմի ի փիլիսոփայական հաւաստեաց թուիցիմք համարել , տեսցուք զինչ նախ Ղրիստակէսն այն ասիցէ . “ Եւ միւս նշանն որպէս փշիկ է , և է ի վերայ այնց
 ,, զրից , որոց գլուխն որպէս զատի է , և չէ զատ , և ոչ լիւն՝
 ,, որ ի համարողականն զերեսներորդ թիւն ունի . այլ
 ,, զիւն է սա , որ ի զատինացի անուանի և ի յէղի էղի ,
 ,, և ի զամս և յաղէղութայս և ի Աթանայէղս և յԱս-
 ,, րայէղս և որ այլ սոցին նմանս , ուղղակի և նուրբ բերէ :
 ,, Օ ի որք որպէս զլատ զնա խօսեցնեն , այն աւեր է և
 ,, շաղփաղփ . և որք որպէս զլիւն խօսեցնեն , այն թանձր է
 ,, և անյարմար . իսկ այս զլիւն է սրուկ և նուրբ քան զլիւն ,
 ,, որպէս զօրինակդ ցուցի , և ոչ զատին պէս որ ամենեւին

» անկերպ է և անհեթեթ... Իսկ զի զատի գլխով է սահ-
 » մանած , զի լծակից է լինին . և յայլ աղքատ լեզուս նօսր
 » է լինն . և զոր մեք զատով Ղ ուկաս , Ղ ազար ասեմք ,
 » նորա Ղ ուկաս Ղ ազար , այսպէս և զայլն նմանապէս » : Ի
 բանից աստի մեք չկարեմք բնաւ ի միտ առնուլ եթէ զիւրդ
 իմանայցէ քերթողն մեր կէս լիւն լինել զիւրին Ղրիստա-
 կեայ , և ոչ մանաւանդ կէս զառ , որպէս մեքս հաւանեալ
 եմք :

Վանզի ասէ իսկ Ղրիստակէս , թէ տառդ ղ ըստ հընչ
 ման չէ զառ հասարակ և թանձր և անհեթեթ , և ոչ լինն՝
 նոյնպէս թանձր և անյարմար առ համեմատութեամբ սրտի
 և նորի զառի՞ն զոր ինքն զիւր անուանէ . այլ զիւրն է սա ասէ ,
 համարելով թերեւս այրն բարեմիտ թէ և հնչումն ձայնին
 անկորուստ ընդ գրելոցն մնացէ : Իսկ զի զառի գլխով է սահ-
 մանած , ասէ , զի լծակից է լիւնի . — այլ զայս ոչ ընդունի
 քերթողն մեր , որպէս տեսաք ի վեր անդր :

Յաւելու գրին . և յայլ աղքատ լեզուս նօսր է լիւնն , — ա
 պա ոչ և ի մերումն , և զոր մեք զառով Ղուկաս , Ղազար ասեմք ,
 և ոչ ըստ կարծեաց քերթողին մերոյ կէս լիւնի . Ղ ուկաս ,
 Ղ ազար , նորա (այսինքն այլք յաղքաց) Ղ ուկաս , Ղ ազար .
 և թէ ինքն ի գրելն զայստիկ որպէս հնչէր՝ գործ է գուշակել :
 Ղեք չկարծեմք թէ առողանէր Լեուկաս կամ Լեուկաս , Լեու-
 զար կամ Լեուզար :

Իայց Արզնկացին յաւելեալ ի բանս Ղրիստակեայ և
 յիւրմէն պարզաբանութիւնս , մանաւանդ թէ շիթթս և
 իրթնութիւնս (որպէս յայտ է ի ներհակախօս բանիցն)
 ասէ . « Ի բառս խօսից լիւնն յայտնի է ի բազում իրս ,
 » բայց զառն երէ՞ս գրոյ րեղի լիւն , մին զիւրն և մին զլիւնի » :
 — Յայս վայր պարզ է ասացածն , և ցուցանէ թէ լիւնն մի
 եւեթ ունի ձայն , և ոչ (որպէս լիւնն Սպանիացոց և Ղեհաց
 և () սմանեանց) կրկին , մին թանձր և հասարակ լա . և միւս
 եւս նօսր և իբրու կէս լիւն՝ լեա . իսկ զատն կրկին է , մին
 թանձր և միւսն բարակ՝ զոր և սա զիւրն անուանէ : — Ղյլ
 բեր տեսցուք և զոր յաւելուն ի մեկնութիւն զիւրն ձայնիդ .
 « Ղլ է , ասէ , լիւնն թանձր , և զիւրն նօսր ի ձայնս . զի
 » լիւնով յորժամ ասես լա , լար , լոյս , ուղիղ է , և զիւ-
 » նով անհամ երեւի » : — Եթէ նօսր ասելով զլիւն՝ Արզն-
 կացին եւս ըստ քերթողին մերում կէս լիւն իմանայցէ ,
 զիւնչ անհամութիւն իցէ ի հնչելն լեա , լար , լիւնս առ

համեմատութեամբ ստոյգ անհամութեան որ յառաջ գայ՝ ի հնչելոյ դաս, դար, դոյս՝ որչափ ենթաբնիցէ որ զլիւնդ և լմիցէ : Արդարեւ իսկ յաւելլու Արգնկացին ի բանսն իւր և ասէ յայտնապէս . Դանչի դիւանն էն լիւնի է ըստ Ֆայնին . բայց թէ զինչ իմանայցէ էն լիւնի ասելովն՝ մթին է վասն մեր և իւրթին՝ որպէս և հին քերականին կրիտի ասելն զլիւն , և յերկուց դասից բաղկացեալ :

Եւ յիրաւի . զի ասա հին քերականին կրկնակ ասել զլիւնն՝ իբրու յերկուց դասից բաղկացեալ, և Արգնկացւոյն էն լիւնի անուանել զնայ և զբարակ դատ կամ զլիւնն՝ ոչ զմի և զնոյն տայցեն իմաստ , թէպէտ և առանց ի տառադարձութեան կանոնսն ապաւինելոյ չիմանայցեմք մեք զիրոց որպէս արժանն է :

Իմանամք և զԱլեցւոյն թէ ի լիւնէ դիւան էլանէ . եւ է լիւնն Լանչըր , եւ դիւանն նոսր ի Ֆայնարուլիւն : — Վանզի եթէ արդարեւ ի լիւնէ զլիւն ելանիցէ՝ ոչ իբրեւ կէսն լիւնի ըստ հին քերականին , այսինքն դատ մի նայ և լերկ , այլ իբրեւ էն լիւն աղճատ և ծեբեալ , զի բնաւ հարկ էր զըջացն այնոցիկ միջնոց և յետնոց զփշիկն ի վերայ դատին դնել և ոչ միշտ ի վերայ լիւնին , որպէս արարեալ են սակաւք ոմանք :

Օնակկանդ զօրութիւն ընդդիմադրութեանս տեսեալ է և քերթողն մեր ինքնին . և իբր ի լուծումն սորին ճգնի կակղել զղաան (զոր յայլ տեղիս միշտ կոչորդային , կոչորդախօս , կոչորդաճայն անուանէր) և ամենանորէ կոչելով զայն ընդ լիւնին ի համբոյր ածէ , յօրինակ ի մէջ առնելով զՅունաց և զ L mouillee Վաղղիացւոց , որպէս ի վեր անդր յիշատակեցաք :

Սնայ արդ և այնմ ի փաստից Վագրատունւոյ հօրն տալ պատասխանի , որով զլիւն օտարաց ի կոկորդախօս դատ փոխել յոյժ անտեղի համարի և օտար յամենայն լեզուաց օրինաց :

Եթէ քերթողն քաջ ամենայն լեզուաց օրէնս համարիցի զայն՝ զի յ Յունաց չիփսի երբէք ի λ , և ոչ ց Լ ատինացւոյ ի Լ , և ոչ լիւնն Տաճկաց ի դայն , յիրաւի է նմա օտար յօրինաց աստի համարել զմերոյ դատին ի լիւն օտարաց փոխակերպութիւն , և զլիւնին նոցա ի մերս դատ փոխումն : Իսկ եթէ աշխատութիւն յանձն առեալ միտ դնէր կանոնաւորացն եւեթ և զիւրահաս փոփոխմանց զանազան լեզուաց առ մեզ և առ օտարս յաճախելոց , ոչ ինչ երկբայիմք զի

նախ ոչ օտար յամենայն լեզուաց օրինաց կուէր զննդիրս տա-
 ռագարձութեան մերոյ, և ոչ յետ այնորիկ ի կնձուել խորն-
 դրոյն փոքր մի՝ ածէր թափեր վաղվաղակի՝ թէ « Ըստդիկ
 ,, անհասից խնդիրք են՝ թագուցեալք ի մնայլ գաղտնութեան
 ,, ծագման, կազմութեան և փոփոխման լեզուաց . » : — Ըն-
 են արդարեւ ի յարակցութիւնս լեզուաց այսպիսի անհասից
 խնդիրք, բայց ոչ հաւանիմք եթէ զատին և լիւնի լծոր-
 դութիւն ընդ այնոսիկ իցէ դասելի . ապա թէ ոչ, եղունկ էր
 ամենայն բանասիրաց որ ի հետազօտութիւն և ի համեմա-
 տութիւն լեզուաց պարապեն, զի զուր վաստակէին՝ իբրու-
 ցանդ յանհասսն ձգտելով վայրասպար և յամենայնի :

Ըստ մեզ հարկ ի վերայ կայ պատասխանի առնել և
 այնմ հարցուածոյ զոր քերթոջն առնէ տարակուսանօք՝
 մխեալ ի խնդիր կանոնաց օտար լեզուաց . « Ըզիտեմք,
 ,, ասէ, որով իրաւամբք զլիւնն օտարաց զատ առնեմք . » :
 — Ը որ տամք պատասխանի ըստ ասացելոցս . — այնու
 իրաւամբ որով նախնիքն մեր հայեցեալ ի սեպհական յատ-
 կութիւնս լեզուիս մերոյ՝ զատ եզեալ են հանդէպ լին
 Յունաց և լամէտին Եբրայեցւոց և Ըսորոց, և լեամին
 Պարսից, և զանուանս լեզուացդ այդոցիկ ի մերս զատիւ
 փոխեալ են : Վարձեալ և այնու՝ որով և օտարքն զմերս
 զատ յիւրեանցն լիւն փոխեալ են, ոչ միայն ի հասարակ
 բառս՝ զորոց թերեւս վիճեցի ոք զհայութենէն, այլ և ի
 յատուկան, և որք առ մեզ ոչ երբէք առնուն զփշիկն ի վե-
 րայ . զոր օրինակ են Ըղուանք, Վարանաղիք, Սաղարշ,
 Սաղարշակ, Սաղարշակերտ, Սաղամաս, Սաղխաղ և այն
 որք առ հասարակ լիւնիւ ասին յայլոց, Ալլանիս, Տարանա-
 լիսի, Պէլաշ (պրս.) և Վոլշէսիս (յունարէն) Պէլաշէ (պրս.)
 և Վալարսաիս (յն.) Պէլաշէրո (պրս.) և Ալաշէրո (թուր-
 քերէն և ռամկօրէն), Սալմասո (պրս.), Սալմասո (թուր-
 քերէն) և այն :

Բայց եկ տես դու զարմանս մեծ, զի քերթոջն մեր չգի-
 տեմ որպէս՝ յետս ընդդէմ մերոցս կարծեաց համարի առ-
 նուլ զօրինակսդ . Ըսէ . « Ը որ առաւել մեծն է և պարտի
 ,, ձգնել զհակառակ կողմն . . այն է մանաւանդ զի զհայկա-
 ,, կանսն Սաղխաղ, Սաղամաս կամ Սաղամաստ, և զՎար-
 ,, թեւականն մեր Սաղարշակերտ կամ Սաղաշկերտ՝ ի բա-
 ,, զում ժամանակաց և այսր նոյն իսկ ազգն մեր ի հասարա-
 ,, կաց խօսս ասէ Սալխաղ, Սալամաս կամ Սալմաստ,

» Լ՛աշկերտ : (Ի)ող արդ հակառակ կարծիքն մեզ ի դէմն
 » բերցէ զղատիւ անուանս մեր՝ լիւնիւ յեղեալ ի յոյն և ի
 » յայլ , յորոց են և անուանքդ այդորիկ . և ընդ առաջ
 » հանցուք նմա յաւիտեան զսոսկալի ատոյեաննն Ս՛ալիսազ
 » հանդերձ երկու համհարզօքն Լ՛աշկերտ և Ս՛ալմաստ , » :
 — Եւ զի տեսաւ յայտնապէս թէ յաւիտեանական և սոս-
 կալի ատոյեանն այն և համհարզօքն ի մէնջ կուսէ պատե-
 րազմին ընդդէմ վարդապետութեան նորա , աւելորդ է մեզ
 յերկարել զայսմանէ զբանս :

Ոչ ինչ աւելի քան զայդպիսի ատոյեանսդ ունին ընդ-
 դէմ մերոյս փաստից զօրութիւն որդիբոյն քաջահմուտք պարսիկ
 արաբացի և Ռուսք բարբառոց որ յարքայանիսս ոսպանի Կոստանդի-
 նական քաղաքին . որոց հարցեալք ի քերթողէն թէ առ նոսա
 կարելի ինչ իցէ օրինօք փոխանակութիւն զատի ընդ լիւնի ,
 վկայեալ են միաբան թէ չունի տեղի այդպիսի փոխանակու-
 թիւն ըստ օրինաց լեզուի . — որպէս եթէ նոցա ինչ վկայու-
 թեան կարօտիցի քերթողն մեր և մեք առ ի գիտելոյ թէ ի
 մերոմս լեզուի (զի այս է խնդիրն) և ի բառս որ ի մէնջ առ
 այլ կամ յայլոց առ մեզ անցեալ են՝ կայցէ՛ ինչ փոխանա-
 կութիւն զատի ընդ լիւնի թէ ոչ :

Յաւելու նա հարցանել . « Որով իրաւամբք զոմանս զատ ,
 » զոմանս լիւն , նաեւ ի նմին բառի՝ զմի յոյն կամ լատին
 » լիւն առնեմք զատ , և զմիւսն՝ լիւն . երբեմն և ի նոյն ա-
 » նուան՝ մերթ զատ մերթ լիւն , կամ աստ զատ , անդ լիւն , » :
 — Եւեմք . այնու իրաւամբք առնին այդորիկ , որով և զԵ՛ Յու-
 նաց՝ է զի Բ և է զի Չ , և զԿ՛ նոցին է զի Գ և է զի Ղ , և զԸ՛
 մերթ է և մերթ է և մերթ է , և զԿ՛ է զի Գ , է զի Խ և է
 զի Ղ առնեն նախնիք , և մանաւանդ յաջորդք նոցա միջակքն
 և յետինք : Եւ ընդ այս չհամարիմք օրէն զարմանալ առն
 քերականի և լեզուագիտի . զի յայսպիսիս՝ որպէս և յայ-
 լումն ամենայնի՝ ամենայն կանոն զիւրն ունի խոտորումն ,
 որովք որք կամիցինն կարող են վարել . և ոչ եթէ հարկ
 առնիցեն խոտորումնքդ այդորիկ և զկանոնն թիւրել , այնպէս
 զի ի սէր ճառարախաղաք հնչման ճառարա՛ւ ասիցեմք , և ի պատ-
 ճառս ելի ելի ձայնին ելի : Եւս թէ ոչ , օրէն է և ամե-
 նայն ումեք միտս և քիմս ուղղել կարծելով՝ այլափոխել
 զհնչումն և զգրութիւն բազմապատիկ բառից և անուանց
 մերթ այսպէս և մերթ այնպէս գրելոց , և ոչ եւս ասել օրի-
 նակ իմն՝ Բարսեղ և Բարսիղ և Ս՛ասիլ , այլ միշտ Բասի-

լիոս . ոչ եւս Եղիսէ և Եղիշէ և Եղիշայ , այլ միշտ Եղի-
սէոս . ոչ եւս Կիւրեղ և Կիւրիղ և Կիւրդոս , այլ միշտ Կիւ-
րիչ : — Վերթողն տայ մեզ պատասխանի , թէ “ () օրինակ
ոչ է փաստ ” . առ որ ասեմք և մեք նախ թէ ոչ ամենայն
տրամաբանից ընդունելի է առածդ յաֆնայի , եւս առաւել
մեք չկարեմք ընդունել թէ յայս խնդիր լծորդութեան տա-
ռից և փոփոխմանց նոցին՝ օրինակք այսքանք և այսպիսիք ոչ
ունիցին բնաւ ամենեւին զզօրութիւն փաստի . ուր տեսա-
նեմքս զի և քերթողն ինքնին յիւրում Վերականին առաւել-
լութեամբ օրինակաց իբրու փաստիւք Հաստատէ զկանոնս
մերոյ բարբառոյս . և ի սմին իսկ ճառի ուր ուրեք և դտանիցէ
ինչ օրինակ , թէպէտեւ ի Տոնապատճառս իցէ , թէպէտեւ
ի խորանս կամ ի լուսանցս աւետարանաց , որպէս Հաւաստիս
ի մէջ ածէ ի զօրավիզն իւրումն վարդապետութեան :

“ Երկրորդ , ասէ , ամենայն ունկան յայտնի է նմանու-
” թիւն ձայնիցդ բ և վ , դ և ղ , ք և խ , է և ե , և յոյժ
” մերձաւոր գործարանաւ բերանոյ կամ Հազագի ելու-
” զեալ , և ոչ ասպարիսս — կեռի՝ որպէս զսորին և Լիսին ” : —
Թէ որչափ ինչ ազգիցէ այս ասացուած , շատ իսկ ցուցեալ
Համարիմք ի վեր անդր : Ընցցուք ի պատասխանի միւսոյ
Հարցմանն :

Հարցանէ և եւս . “ Եւ որով իրաւամբք չառնիցեմք նոյն
պէս զատ և յանուանս այժմու ազգաց ” : — Օ այս Հարցումն
ոչ ինչ անդէպ էր քերթողին առնել և մեզ Հաւանել , յոր-
ժամ և նա ինքն և մեք Հարկ և պատշաճ վարկանէաք և
զայլ ամենայն տառս օտարազգի անուանց ըստ կանոնի
նախնեացն տառադարձութեան փոխաբերել ի մերս . զի ե-
թէ զ] աֆոնթէն գաղղիացի յանձն առնուցու նա Լաֆոնայի
ասել , և մեք ոչ դանդաղեցուք արդեօք զլիննորին եւս ի զատ
փոխել ըստ նախնեաց և ասել Լաֆոնայի , որպէս ինքն ածէ
յօրինակ զբառդ և զնմանիս դորին : Եւ զի միաբանեալ եմք
զանուանս այժմու ազգաց առաջի առնել ըստ կարի ըստ բուն
հնչմանց նոցին և ոչ ըստ կանոնաց տառադարձութեան , զորս
խնամով պահպանեմք ի հին անուանս , ոչ կարծեմ բնաւ թէ
վասն այնորիկ ստիպիցիմք և զհին անուանան ծեքել և ասել
Լուկուլլոս , Պլատոն , Պլուտոն , Եւոլոս , Պաւլոս , Պա-
լիանոս , Վաթոլիոս , Կիւրլոս , Կիւրե՛լ , Բարսե՛լ , Սե՛լ
բեստրոս , Վալիկեդոն , Պալմատիա , Պալեստին , Երու-
սալէմ , Պալատացիք , Թեսալոնիկ , և այլն և այլն :

Օհետ հարցողական փաստիցն, զորս յաղթահարիչս արդեօք կարծէ նա, անզօր իմն գրէ զփաստն մեր յաղագս լինինն օտարաց ի մեզ զատ լինելոյ և ոչ միշտ լինն՝ օրինակաւ և այլոց եւս օտարազնեայ տառից այլափոխութեամբ իմն առ ի նախնեացն մերոց ի մեզ փոխաբերելոց: Վանդի ասէ. «Վախնիքն յամենայնի այնչափ եւեթ զմմանազոյն», տառս մեր եղին ի տառադարձութեան հանդէպ տառիցն», օտարաց, որչափ մարթերն և տանէր լեզուն», — (Ժե որչափ վճիռս այս ունիցի ճշմարտութիւն՝ դիւրին է իմանալ որում լսիցէ զյունին ասել յրոյթորիօս (հրէհրիոս) և զհայոյն Գրիգորիոս, զյունին βασιλειօս (Վասիլիոս) և զհայոյն Բարսեղ, զյունին διδραχμη (փոքրախփ) և զհայոյն դրտրաճայ. զլատին նացւոյն գոթա փոթա անի անի, և զհայոյն հոնդիհոնդ սոնի փոթ. զարաբացւոյն Պեշիւր և զհայոյն Բշր. զպարսկին Պէլաշ և զհայոյն Վաղարշ. զտաճիկին Ինլիկ կամ Ինլիկ և զհայոյն ընդոնդ, զուսին և զայլոց օֆիսիէ, ակիցեր, օֆիցիո և զհայոյն ակիսեր. զիտալացւոյն փոթալիս և զհայոյն դափ ճիհ, զօտարացն պոնափարի և զհայոյն Բանապարս՝ եւս և Ղանդորս: Վանդի գիտէ զի հայն կարող էր և տառիքն և լեզուաւ ճշգրտագոյնս տալ զհնչումն օտարազգի բառիցն, որպէս և ինքնին արարեալ է քերթողս յիւրումն գաղղիական ճոխ Վերականութեան:

Սին իրի աւելի իմն առնէ նա յորժամ ձայն տայցէ լեզուազիտաց ճշգրտագոյնս զնախնեացն կանոն տառադարձութեան առաջի առնել զհնչումնս օտարազգիս զօրութեամբ մերոց այբուբենից. «Եւ այսօր, ասէ, ոչ որ յու», զիղ և քաջ հայազիտաց և յունազիտաց կարասցէ բնաւ», զայլ ինչ գտանել յարմարագոյն քան զեղեարն ի նախնեաց: Չայն տա՛նք առ ամենեսեան եթէ կարողացի որ», առնել զայդ», Որպէս ասացի իսկ, ահա նա ինքն արտաքոյ և հասարակ կանոնաց տառադարձութեան տուեալ է մեզ զհնչումնս գաղղիական տառից և անուանց՝ յարմարագոյն քան զբերականն ի նախնեաց զիւրն տեսանելով:

Սակայն պնդի նա ի բանսն և ասէ. «Վախնիքն մեր ի տառադարձութեան հելլեն տառից որչափ հնար էր զնմանագոյն տառս մեր փոխանակեցին նոցա, որպէս հասարակաց միտքս պահանջեն, և որպէս ցուցեալ իսկ է այս համառօտիւ և ամենեցուն հաւանութեամբ ի Ռազմավէպն մեր», — Ըստ, հասարակաց միտք պահանջեն,

և բանք (Բազմավիպին զնոյն հաստատեն, Բէ նախնիքն մեր
 զնճանագոյն րաւոս մեր գոխանակեցին տառիցն հելլենացւոց,
 բայց ըստ սեպհական յապիտաւեանց լեզուիս մերոյ՝ որոց յոյժ
 տեղեկազոյնք էին նախնիքն մեր քան զմեզ: Աթէ մերս
 քերթող յուրաստ կայցէ ի սեպհական յապիտաւեանց լեզուաց
 իւրաքանչիւր, և զայնպիսիսն անհասեց ինորիս կոչիցէ, մեք
 ոչ ինչ հակառակիմք ընդ նմա:

Բայց առ ի ցուցանել թէ գոն իսկ սեպհական յատկու
 թիւնք լեզուաց իւրաքանչիւր, գոյ ուրեմն և մերոյ լեզուիս,
 զանակնառու ընթերցողս մեր հրաւիրեմք զմտաւ ածել, օ
 րինակ իմն, զգերմանականն բարբառ. մանաւանդ թէ զօտա
 րոտի լեզուս ի բերան որոյ և իցէ գերմանացւոյ առն, և
 հարցանեմք. զի է զիտալականն պոն ճիօնո գերմանացին
 բոն ջիօնո ասէ. և զգաղղիականն Բրէ պէն նա րբէ բիէն.
 զՎ ենետիկն Փէնէրի, զԻթերպուրկն Պէրբերգ (ոչ ինչ
 ընդհատ ի հայոց վրաստանեայց, և ի նախնեացն տաւա
 դարձու թէնէ). — ոչ ապաքէն յատկութիւն է այս սեպ
 հական մտաց և գործարանի գերմանացւոցն յիտուն միլիոն
 ժողովրդոց առ հասարակ:

Իսկ եթէ մեք առ սեր դիւնին կամիցիմք ոչ եւս ալֆա,
 Վէլա, դամա, րեշրա ընթեւունու, այլ ըստ նախնեացն
 գրու թեան աղէա, բէրա, գամա, րեշրա, և զբերայեցւոցն
 ոչ եւս ալէֆ, պէն, իէմէլ, րալէն, այլ ըստ նախնեաց, աղէֆ,
 բէն, գիմէղ, րաղէն, և զմերսն եւս այպ, պէն, իէմ, րա,
 այդ այլ իմն ինդիր է որ երկարագոյն բանից կարտի, և
 սակայն ոչ ինչ ստնանէ ինդրոյ զատին և լիւնի՝ թէ յաջ
 սահմանեցի և թէ յահեակ:

Դարձեալ և այլ ինչ ինդիր ի դէպ թուի մեզ առաջի
 առնել. եթէ այնչափ տարանջատք յիրերաց թուիցին ղ և ը,
 զինչ ասիցեմք առ այն զի և ը կամա, եւս և ի տեսանին
 փոխանակեալ ընդ լիւնի, ուր զատն միջին իմն է ընդա և
 ընդ լիւն, որպէս և ընդ ի և ընդ լիւն. զի ահա (իբրեւ զմի
 ի հարիւրոց առնելով յօրինակ) ի մերումն սասղ բառ ի պար
 սիցն ալթեր է, և ի հելլենն ἄστρον, թէպէտեւ ի լատինն
 stella. մերն շափիլայ (որոյ շափիլայ գրուած ի Տօնապատճա
 ուին վրիպակ մեզ թուի) յեբրայեցին սաֆֆիտ է, և ի
 հելլենն σαφειρος. պարսիցն զիմբրիտա՝ ի յոյնն սμα
 ράγδος, ի մերս զմրոնա է և ի լատինն smeraldus.

Յաճախագոյն եւս և զարմանալի օրինակ այսմ փոփո

խուժեան լիւնին ի ր ունիմք ի յօլով բառս Վաղղիացւոց ի լատինէն և ի յունէ փոխանցեալս առ նոսա . զոր օրինակ τίτλος, titulus, գաղղ . titre, զոր և ոչ սակաւք ի նոցանէ Թիթղ հնչէն հանգոյն իմն մերոյ հնչելոյն րիպոս (և ոչ րի- րիւս) . — լատին . capitulum, գաղղ . chapitre, և ըստ հնչելոյ ոմանց շափիթղ . — գերմ . սակել, սլաւ . սակլէա, իտալ . շիակուա, և գաղղ . սակո, և այլն : Ալ զի ընդեւա- գոյն եւս ինչ արդեօք ունկան քերթողին առցուք յօրինակ դիւրափոփոխ լծորդակցուժեան շայնին ընդ բէի, աւանիկ ի նմին իսկ ի փափկագոյն կարծեցեալ հնչման հայոց բիւ- զանդացւոց յաշխարհին լեզուի, ամենայն լիւն անցեալ ժամանակի գերբայից ի ր փոխի, գրեալ էժ, րոտեալ էին, էէեալ անցեալ, — գրեր էժ, րոտեր էին, էէեր անցեր . — և այլ բառք ի բերանս բազմաց ար հնչէ . ես ար, րոտն ար, այսինքն ես այլ, րոտն այլ, ես եւս, դու եւս : Ալ սմին հակառակ նորին իսկ բիւզանդացիք զբէ ձայն ի լիւն փոխեն ի տձկ . բառիս արթըֆ, և ասեն արթըֆ :

Այժ է որ արհամարհիցէ զայսպիսի լծորդատառուժեամբք, և անկանոն խոսորմունս և ռամկական ծեքաբանուժիւնս անուանիցէ՝ հանգոյն այլոց բազմաց որ իցեն իբրեւ զԾոռն և զԾայրան (որ են Տիւրոս և Սիդոն), և իբրեւ զՇառաղն և զՇարիք, զՅեղղ և զՇառան, և որպէս Գիթէն և Պեր- լեոտեթէն և Մաթիսոս, սակայն հարկ է խոստովանել թէ ոչ անպատճառք են փոխանակուժիւնքս, և թէ արդարեւ լծորդք են « և շ, կ և ճ, փ և ծ, և այլք յօլովք, որպէս և ձայնաւորքն ամենայն ընդ միմեանս . — ընդէր ապա և կամ զիւրդ ժխտիցէ զլծորդուժիւն զատին ընդ լիւնի :

Առ մերն հարցումն եթէ « Ինդէր ազգն ոչ ուրեք ասիցէ ,, Ազար, Աուկաս, Բարսել և այլն ,, համարի քերթողն աներկբայելի տալ պատասխանի զօրինակն հայոց Առտեալի ((Ըրանսիլվանիոյ) որք ոչ միայն Ազար ասեն ասէ, այլ և Լու- քալ, որ է Պուկաս : Ալ զի ոչ անգիտանայ թէ նոյն Առտեալի հայքն զՅովհաննէսն Եանօշ ասեն, զԱղիայն Էլեաշ, զԱն- դրէասն Անրոտաշ, զԱրկողայոսն Միթղղ, յար և նման Սա- ձառաց յորոց միջի խառն բնակեալք են, և թէ ոչ որ յերիցա- նւոյն Առտեալի իսկ աւերարան ըստ Լուքալոս ընթեռնու յեկե- ղեցւոյ, ինքնին ի բաց թողու զօրինակն և յայլ ինչ դիմէ . « Իսկ թէ այդ առ ոչինչ գրի (ասէ) և ոչ ազգային հնչումն, ,, ահա յընտիր գրչազրի մեկնուժեան խորանաց համաբար-

» բառի աւետարանացն կայ գրեալ և Դ ուկաս . և դարձեալ
 » անդ ի միջին գրեալ Դ ուկաս , և ի լուսանցսն նշանակեալ
 » կայ Լ : — (Թէ որչափ ընտիր իցէ գրչագիրն այն ոչ զիտեմք .
 այլ զի չէ յայտնի և ոչ հաւանական բնաւ թէ ուրուք ի
 բուն թարգմանչացն մերոյ ի Սահակայ կամ ի Մեսրովպայ
 իբրով ձեռամբն գրեալ իցէ զայն , անհնար է մեզ հաւանել
 և աստ քերթողին , և ի յիսնից և ի վաթմնից ընտիր ընտիր
 օրինակաց աւետարանի , որ երկաթագիր և որ բոլորագիր ,
 զմին միայն ընտրել առնուլ յօրինակ , այնու զի ի խորանսն
 նախակարգեալս , և այն միանգամ եւեթ ի մէջն և երկրորդ
 անգամ ի լուսանցսն , գտանի Դ ուկասն Դ ուկաս գրեալ , և
 զայն ի մէջ մատուցանել իբրու ազգային հնչումն և կանոն
 հնչման և գրութեան :

Օ ալէլուին լիւնիւ հնչումն ԲԺ Կառնուրիւն անուանէ .
 սակայն մեր չիք երբէք ասացեալ թէ լիւն տառ չկայցէ
 բնաւ ի բառս օտարոտիս , կամ թէ չգուցեն ամենեւին զիւ
 նիւ գրեալ անուանք որ յետ ժամանակաց լիւնիւ գրեցան և
 հնչեցան :

Բայց ինքն քերթողն թէ շատասցի այդպիսի և այդչափ
 հաւաստեօք , այլ մեք ինդրեսցուք ի նմանէ ասել ցմեզ
 նախ թէ ո՞ր տեսեալ իցէ նորա գրեալ երբէք և կամ լուեալ
 իցէ հայոյ ուրուք հնչեալ կամ ընթերցեալ Բարսեւ , Բար-
 սի , Արարոս կամ Արարի , Պիլատոս , Բետիլուա , Սողոմոն ,
 Պլատոն , Պտղմէոս , կլերիկոս , Ալեմէս , Սողոք , Լ ունկիւս-
 նոս , Ղալգալա , Ղոլգոթա Վալդէացիք , Սալաքիա , Սա-
 լալայէլ , Բալասամ , Թագալթփալար , Սալմանասար , Լը-
 քելայոս , Բէեղեբուլ , Լ եւտացի , Լըքսանդր (զի Լըք-
 սանն այն քերթողին մերոյ , ոչ ի հին գիրս երեւի , մանա-
 ւանդ թէ և ոչ ուրեք ի գիրս , այլ ի խօսս , և այն Լըքսիա-
 նոսն է յետին գրոց) , Ղալայադ , Սաբալ , Բնիբալ , Սել-
 բեստրոս , Բալտասար , Ալադիոս , Շելինէ , Ելիշէ , Ելիա ,
 Ելիազար , Լպոլինար , Յոբնալ , Պօլիկարպոս , Սալէս ,
 Թալէս , Երուսալէմ , Սելոս , Աիլոս , մինն , տալանդ , և
 այլն և այլն :

Ոչ ժխտեմք թէ կարող է և ինքն ցուցանել մեզ անուանս
 քանի մի ըստ ալէլուիային՝ որ ի գիրս զատիւ գրին , և այժմ
 սովորաբար լիւնիւ հնչին և գրին . այլ ոչ ասաքէն խոտորմունս
 ասելի է զգոսին առ անհամար բազմութեան այլոցն ազգայ-
 նոց և օտարազգի բառից , որ զատիւ գրին և զատ հնչին ի

Տայկաղնեայց առ հասարակ : Այլ որպէս համարիցի նա թէ
 “ Ախտով չափ և Ռերբեւս ԹԺ Կէ” եբրայեցի և յոյն և լատին
 “ անուանց լինիւ է ի բերան ազգին ” : Օ որ իբրեւ գիտելի
 ինչ քերականական և աներկբայելի յառաջ մատուցանէ այլ
 լուր ասելով . “ Այլ գիտելի է , զի անուանք եբրայականք՝
 “ յոյնք և հռովմայեցիք՝ յաճախ սովորեալքն ի բերան ազգ
 “ գիս , ի միջին դարուց և այսր , գրեթէ առ հասարակ
 “ լինիւ գրին և ասին , բաց ի սակաւուց ոմանց , և թէ և
 “ հաւասար եւս իցեն՝ կէս աստի և կէս անտի՝ հաւասար լինի
 “ և զօրութիւն ցուցմանցն ” : — Իսկ մեք չառնումք յանձն
 զհետեւանսդ . զի յորովագոյն յոյժ և անհամեմատ բազմու
 թեամբ աւելի գիտեմք զգատիւ գրեալն և հնչեալ քան թէ
 լինիւ , որչափ և սնդիցի բերթօղն ի բանս իւր : (Իող զի
 որպէս կանխեցաք ասել , զատից բազմաց ի լինն փոխելոյն
 ի վաղեմի գրչագիրս իսկ և ի բերան ազգին գտանեմք մեք
 լուծումն ինչ և կանոն . իսկ նա թէ զոր հաւաստիս ի մէջ
 բերիցէ իւրումն կարծեաց կամ վարդապետութեան՝ թէ
 “ Ըսն ամենայն բառք օտարաց լինիւ գրեալք առ օտարս
 “ և ի մեր լեզու ի զատ փոխեալք՝ Կէ” Լեւիտեւս արտա
 “ բերելի ” , ահա տեսաք փոքր ի շատէ , որպէս կարծեմ :

Բայց տեսցուք առ վայր մի և զայն թէ զոր լուծումն
 տայցէ և երկու կամ երկից առարկուածոց զորս յաւելաք առ
 նել ընդդէմ վարդապետութեան մեծարոյ բերթօղին : —
 Եք ի հաստատութիւն կարծեաց մերոց՝ թէ հնչումն ղ
 տառի զատ է և յօտարագրի անուանս փոխաբերեալս ի
 մեզ , և ոչ լինն , յուշ արարաք նմա զի բառդ ղեփայցի գտա
 նի առեալ յ նախդիր , այսպէս , յղեփայցիս , յղեփայցոց . քան
 զի ըստ մերոց կարծեաց՝ զատին եւս հնչումն նման է յայսմ
 “ և ը տառից , որք նոյնպէս գտանին առեալ յ նախդիր .
 զոր օրինակ , յուամիկ , յՐախաբ . իբր զի արտաքոյ է յատկու
 թեանց լեզուիս միով իւրք ի “ , ը և ղ տառից սկսանել
 զբառս , այլ զտառն ը առնուն այդպիսի բառք սակաւ
 գէթ զօրութեամբ , որոյ վասն և յ նախդիր եւս մարթին
 առնուլ : — Ես տայ առ այս պատասխանի թէ “ Ըսդ է
 “ վասն ըթիւ ասելոյն երբեմն ըղեւտացի ” . որով ապա
 քէն զմեր կարծիս հաստատէ . զի թէ Լեւիտեւսի հնչելի
 ըթիւ ասել զիարդ էր հնար , ուր չիք բառ լինիւ հա
 ւեալ՝ որ ըթիւ հնչիցի : — Բայց նա և այլ ինչ հայթայթէ
 պատճառս . ասէ . “ Իւանդի ըստ նախասացելոցդ մտեալ էր

„ յազգն զատիւ հնչումն բառիդ , այնուհետեւ ըստ նմա ,
 „ նութեան հայ բառից ինչ , որպէս զերձ , զորդ և այլն ,
 „ ըթիւ ասացեալ է ուրեք յղեւտացիս , յղեւտացւոց . : թիւ
 մըջախ ինչ զօրիցէ այս լուծումն , ոչ է հարկ ասել . բայց
 զայն միայն կամիմ յուշ առնել՝ զի ուրեքն այն ի Վախադրու
 թիւնս անդ աստուածաշունչ գրոց է , զորոց ոչ է մարթ
 ժխտել զվաւերականութիւն . զի յայտնի թարգմանչացն
 մերոց յօրինուած և կամ թարգմանութիւն են և այն նա
 խադրութիւնք : Վպա ուրեմն եթէ անդստին ի ժամանա
 կրս թարգմանչացն , և յառաջքան զգիւտ գրոյս մերոյ ,
 մտեալ էր յազգն ղե-ր-ր-ի ասել և Պա-ղոս , սաղմոս , էկեղեցի
 և այլն , որպէս հաւանի և քերթողն , և թարգմանիչքն ոչ
 ուղղեցին զվրիպակ կարծեցեալ հնչումն , այլ ինքեանք եւս
 նովին կանոնաւն վարեցան ի սկզբան անդ անգամ կանոնա
 ւորելոյ գրաւորական լեզուիս , մեք չկարծեմք ունել արդ ու
 մեք իշխանութիւն դատապարտ առնելոյ զղատ հնչումն
 այսպիսի բառից , և զխեցբեկ լիւնն ընդ այնր փոխանա
 կելոյ :

Արհրորդ առարկուածն մեր եւս կից էր ընդ սմին . այլ
 քերթողն զատաբար առեալ ասէ . “ Իսկ այլուր Ահարոն ը
 ղե-ր-ր-ի , ոչ այնպէս ընթեռնլի է , այլ Ահարոնը ղե-ր-ր-ի ” .
 և յօրինակ ածէ զբերը Վահան , ըղբնա և այլն , և մանաւանդ
 զլիւնիւ ասացեալն փայլեմամբ ը լեռնապետի ըլորստն : — Ը
 դարեւ չիք որ որ ոչ գիտիցէ թէ ը թարմատար՝ յերաժշտաց
 ամենայն ուրեք վարի անխտիր . բայց ոչ նա և ոչ այլ որ ի
 թարթափեւրցն փոքր ի շատէ ի գրուածս Շնորհալոյն և
 կամ ի նմանիս նոցին վանկալաք կամ զո-գ-ա-լ-ա-ք տաղս և քեր
 թուածս՝ կարող է ցուցանել մեզ օրինակ մի հանգունատիպ
 դմին : — թերեւս համառօտագոյն և ուղղագոյն եւս լինելը
 ինդրոյս լուծումն եթէ ասէաք թէ և Շնորհալին , կամ
 սլ որ և իցէ յօրինող երգոյն , ռամկական ազգային հնչման
 հետեւելով արարեալ է զայդ , քան թէ զուղիղ գրեալն
 կամակար մտօք խանգարել և թիւր ընթեռնուլ Ահարոնը
 ղե-ր-ր-ի :

Արրորդն մեր առարկուած այն է , զի Շնորհալին և այլք
 զլիւնիւ հաւեալ բառս ի կարգի այբուբենից դնեն ի տեղի
 զատին . “ Դ եղի դառնութեան , Դ օղեալ ի սիրտ իմ ,
 „ Դ ամբար իմ շիջաւ : — Դ ամբարմամբ լուսոյ , Դ եկալար
 „ ճարտար , Դ օղեալս ամբացն ” և այլն : — Ը այս սոյ քեր

Թողն պատասխանի. « Օ բանաստեղծից ոմանց արարուածդ
 ,, Խ ոչ յեշարանի արժանի համարիմք . զի նորա ասէն , ասէ , և էր-
 ,, կինք , էրկիր , էթէ , նվազ և այն » : — Այլ զի դժուարու-
 Թիւն դժուարութեամբ ոչ բառնայ , և բանաստեղծիցն ազա-
 տուԹիւնք ոչ միշտ անպատճառք են , դառնայ և ասէ Թէ առ-
 ի զայդ առնել շար էր նոցա դար արեսանել զչեան . այլ չկարէ ժրի-
 տել Թէ և հնչումնն զատի էր ի բերանս նոցա , որպէս էն
 իսկ ցարդ եւս ի բերան ազգին , և ոչ լիւնի : Իսկ եթէ եհն
 ի սկզբան բառից է իցէ հնչելի Թէ է , այն այլ ինդիր է :

Ի վախճան բանիս հարկ է մեզ ընդ հասարակաց իմաս-
 տնոց դատաստանաւ արկանել զնորա և զմեր կարծիս , և
 հարցանել Թէ որքան արդեօք մնայցեն նմա յետ այսր ամե-
 նայնի իրաւունք ասելոյ այսպէս . « Վասն որոյ այդ ամենայն
 ,, Բանալ Բօսի է հայկայեանի ի կողմ հակառակ կարծեացն ե-
 ,, ղեւեալք , ոչ ինչ ցուցանեն , և ոչ կարեն ստնանել այնչափ
 ,, հասարարուն ընծայութեամբք և հասանութեամբք հարողեալ
 ,, Չարդարութեան մերոմ : Ար և , որպէս խոստացաք և որ-
 ,, պէս կարծեմք արդեամբք կատարեցաւ , ոչ եւս ի լոկ կար-
 ,, ծեաց համարի է այսուհետեւ , այլ հաւաստի ճշմարտու-
 ,, Թիւն , որպէս ինչ մարԹիցի յայսպիսիս հաւատարիմ
 ,, առնել ստուգագէտ իմացուածիւ » :

Իսկ մեզ ներեսցի նախ զայն երկրորդել աստանօր , զի մեր
 չիք բնաւ ի բաց Թողեալ կամաւորապէս և կամ այլայլեալ ինչ
 ի կարեւոր փաստից քերԹողին , որպէս կարող է ամենայն ոք
 ստուգել , Թէպէտ և ոչ ինչ կարեւոր համարեցաք ի վեր
 հանել և զվրիպակ ինչ կարծիս կամ ասացուածս նորին
 մանունս որ ոչ ուղղակի ունէին զգիտումն յառաջարկեալս
 ինդիր , այլ անուղղակի և ըստ դիպաց , զոր օրինակ են խոր
 հրրդածութիւնքն զհնչմանէ , տառի , ստուգաբանութիւնք
 ինչ բառից , և այլ այսպիսիք :

Երկրորդ , Թէ առ ժամս հրաժարեմք մեք կամակար ի
 վիճելոյ ընդ նմա յաղագս ազգային բնիկ հնչման լիւն տա-
 ոին մերոյ , այսինքն Թէ Հայաստանեայք հնչիցէն զայն
 փառիկագոյն քան զբիւզանդացիս և քան զայս ի վտարանդի
 Հայոց , որպէս մեքս հաւանեալ եմք , Թէ ոչ . — Իբր զի
 այն ոչ օգուտ ինչ գործէ առաջարկութեանս մերում և ոչ
 փասս :

Եւ երրորդ , որ զօրութեամբ և արդեամբք առաջին է ի
 միտս մեր , Թէ այս ընդդիմադրութիւն և հերքումն կար-

Ծեաց մեծարդոյ վարդապետին մերոյ զբնիկ հնչմանէ զիւնին կամ զատի, ոչ ինչ ստնանէ ընաւ ամենեւին իրաւացի մեծարանացն զոր ունիմք առ հանձար նորա մեծ, առ իմաստութիւնն բազմահմուտ, և առ անխոնջ աշխատասիրութիւնն ի հետազօտել անդադար և այնպիսեալ կիրթ ախորժակաւ զձոխութիւնս լեզուիս մերոյ, որոց վասն և արժանապէս պատուեալ են յազգիս և ցանգ պատուեսցին երկասիրութիւնք նորին առ հասարակ :



9012

2013 2230

